

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
հուլիսի 31-ի N 1068-Լ որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ 2025-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արտահանման 2025-2030 թվականների ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ռազմավարական ծրագիր) սահմանում է առկա մարտահրավերներին արձագանքող և ՀՀ կառավարության առաջնահերթություններից ու պետության միջազգային շահից բխող արտահանման զարգացման տեսլականը և դրան հասնելու արդյունավետ ճանապարհը: Ծրագիրն առաջնահերթ բխում է Հայաստանի վերափոխման մինչև 2050 թվականի ռազմավարության շրջանակներում սահմանված արտահանման զարգացման նպատակից և համահունչ է «Խաղաղության խաչմերուկի» հայեցակարգին՝ անուղղակիորեն ծառայելով նաև մարդկային կապիտալի զարգացմանը, գործազրկության և աղքատության նվազմանը: Ծրագիրը միտված է արտահանումը դարձնել տնտեսության զարգացման գլխավոր խթանը:

Պատմականորեն, Հայաստանը մշտապես նշանակալի դերակատարում է ունեցել Ասիայի և Եվրոպայի միջև տարատեսակ ապրանքների, գաղափարների ու մշակութային արժեքների փոխանակման գործում: Այդուհանդերձ, ՀՀ ներմուծման ծավալներն ավելի մեծ են, քան արտահանմանը: Այդ հանգամանքի մեջ մեծ դեր են ունեցել ԽՍՀՄ կազմաքանդումը, իր չորս հարևաններից երկուսի հետ սահմանների փակ գտնվելը և այլն: Ի լրումն՝ Հայաստանը դեպի ծով ելք չունեցող երկիր է, որն էլ ավելի է բարդացրել երկրի արտաքին առևտրային հարաբերությունների կառուցման գործընթացը:

Արտաքին առևտրի քաղաքականության կարգավորման ոլորտում հայաստանյան ինստիտուցիոնալ սուբյեկտների գործունեության մեջ ներկայումս առկա է անհամակարգվածություն և որոշ դեպքերում հարցերին տրված են հատվածական լուծումներ: Հայաստանի արտահանողները բախվում են առևտրային, սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների հետ: Սա վկայում է ներկայումս կիրառվող տնտեսական քաղաքականության համակարգվածության և արդյունավետության բարձրացման անհրաժեշտության մասին:

Արտահանման վրա հիմնված տնտեսական աճ ապահովելու միջազգային լավագույն փորձը ներառում է ռազմավարական և բազմակողմանի մոտեցում: Վերջինս ենթադրում է արդյունավետ առևտրային քաղաքականության իրականացում, որը նվազեցնում է խոչընդոտներն ու սակագները, ինչպես նաև խթանում է մասնակցությունը տարածաշրջանային և միջազգային ազատ առևտրի համաձայնագրերին՝ ճանապարհ հարթելով դեպի միջազգային շուկաներ:

Ռազմավարական ծրագիրը կոչված է լինելու Հայաստանի Հանրապետության տնտեսական կարողություններն ու ներուժը՝ իրենց ողջ ծավալով իրացնելու

համար հուսալի նախադրյալներ և նոր հնարավորություններով օժտված գործունեության դաշտ ստեղծելուն: Այդ նկատառումներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող բալանսավորված և բալանսավորման արտաքին քաղաքականության մեջ կարևոր դերակատարություն է վերապահվում շուկաների բազմազանեցմանն ուղղված գործընթացների ծավալմանը, դրանց հետագա ապահովմանն ու առաջնորդմանը:

Արտաքին առևտրի ոլորտում պետության առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման նպատակով սույն ռազմավարական ծրագրի շրջանակում նախանշվում են գործողություններ՝ ըստ արտահանման աճին նպաստող հետևյալ հիմնասյուների՝

- արտահանմանը նպաստող և մրցունակ միջավայրի ապահովում,
- ենթակառուցվածքների զարգացում և լոգիստիկ հասանելիության ապահովում,
- արտահանողների և նրանց կարողությունների զարգացում,
- շուկաների և հաճախորդների ընդլայնում,
- արտահանման խթանում և ֆինանսավորում:

Սույն ռազմավարական ծրագիրը հիմնված է բազմաշերտ ու համապարփակ վերլուծությունների և ուսումնասիրությունների վրա, այդ թվում՝

- ***Տնտեսության միությունների վերլուծություն***, որի շրջանակներում իրականացվել է ուսումնասիրություն Հայաստանի տնտեսության՝ ՀՆԱ-ի, արտաքին առևտրի, աշխատանքի արտադրողականության, զբաղվածության և մի շարք այլ կարևոր բաղադրիչների վերաբերյալ: Ի լրումն՝ խորքային հետազոտություն է իրականացվել Հայաստանի արտաքին առևտրի ծավալների, աճի տեմպերի, ապրանքային ու շուկաների կառուցվածքի, տնտեսական բարդության, կենտրոնացվածության և պատմական ու ընթացիկ միտումների վերաբերյալ: Ուսումնասիրությունների արդյունքում հնարավոր է եղել վեր հանել Հայաստանի արտահանման և դրանից բխող տնտեսական աճի ռիսկերը:

- ***Հայաստանի արտահանման մարտահրավերների վերլուծություն***, որի արդյունքում խորքային հարցազրույցների, ֆոկուս խմբային քննարկումների միջոցով վեր են հանվել այն հիմնարար խնդիրները, որոնք կարող են խոչընդոտել կամ հընթացս խոչընդոտում են արտահանման կայուն և շարունակական աճը:

- ***Արտահանման քաղաքականության քարտեզագրում և արդյունավետության ուսումնասիրություն***, որի շրջանակում վերլուծության են ենթարկվել արտահանմանն առնչվող քաղաքական փաստաթղթերը, արտաքին առևտրին վերաբերող օրենսդրական կարգավորումները, արտահանումը խթանող մեխանիզմների ու ենթակառուցվածքների որակը, շուկաներին լոգիստիկ հասանելիությունը, աշխարհաքաղաքական միտումները և մարտահրավերները:

- **Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն**, որի շրջանակներում բացահայտվել են արտահանման քաղաքականության այն արդյունավետ գործիքակազմերը և ռազմավարությունները, որոնք կարող են կիրառվել Հայաստանում: Նշյալ ուսումնասիրության մեջ ներառվել են ինչպես զարգացած տնտեսություն ունեցող երկրների, օրինակ՝ Գերմանիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի, Միացյալ Թագավորության, այնպես էլ Հայաստանի հետ զարգացման մակարդակով համադրելի՝ վերին միջին եկամտային ենթախմբի տնտեսությունների փորձը, օրինակ՝ Սլովենիայի, Կոստա Ռիկայի ու Մալայզիայի:

Վերլուծությունների իրականացման համար օգտագործվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ), Կենտրոնական բանկի, ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարանի (UN Comtrade), Միջազգային առևտրի կենտրոնի (International Trade Center) տվյալները, ինչպես նաև այլ մասնագիտական հրապարակումներ:


1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՆԱԽԱՆՇՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Պատմականորեն, Հայաստանը բացասական առևտրային հաշվեկշռով երկիր էր, սակայն վերջին տասնամյակում արտահանման առաջանցիկ աճի տեմպի հաշվին առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) նկատմամբ կրճատվել է և իր նվազագույն կետին է հասել 2023 թվականին (-0.8%), ինչը հիմնականում պայմանավորված է նպաստավոր արտածին (էկզոգեն) գործոններով: Մասնավորապես, նախքան նշանակալից արտածին գործոնների ի հայտ գալը՝ 2013-2021 թվականներին ընթացիկ գներով ներմուծումը ՀՆԱ-ի նկատմամբ տատանվել է 41.9-55.8%-ի, իսկ արտահանումը՝ 28.4-42.5%-ի միջակայքում, իսկ արդեն 2023 թվականին հասել է, համապատասխանաբար, 59.8%-ի և 59.0%-ի:

2. Հայաստանի տնտեսությունն աչքի է ընկնում տնտեսության բացության բարձր մակարդակով. այսպես, առևտրի ընդհանուր շրջանառությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2021 թվականին եղել է 80.2%, 2023 թվականին՝ 118.8%, մինչդեռ 2013 թվականին այն եղել է ընդամենը 77.6%:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՀՀ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ, ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՐԸ ՀՆԱ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ 2013-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐ., (ՏՈԿՈՍ)



Աղբյուր՝ Արմստատ և Կենտրոնական բանկ, Վճարային հաշվեկշռի վիճակագրություն

3. Հայաստանի արտաքին առևտրի զարգացումը վերջին տասնամյակում կարելի է բաժանել երեք փուլի՝ դանդաղ աճի փուլ (2012-2014 թվականներ), Եվրասիական տնտեսական միությանը (այսուհետ՝ ԵԱՏՄ) անդամակցությամբ պայմանավորված աճի փուլ (2015-2019 թվականներ), տնտեսական շոկերի (բացասական և դրական) փուլ (2020-2023 թվականներ):

4. **Դանդաղ աճի փուլ (2012-2014 թվականներ).** այս ժամանակահատվածում գրանցվել է ապրանքների արտահանման ու ներմուծման համապատասխանաբար 5.9% և 1.9% միջին տարեկան անվանական աճ, իսկ ծառայությունների պարագայում արտահանման ու ներմուծման աճը, համապատասխանաբար 7.4% և 8.0%: Ապրանքների արտահանման զգալի մասն ապահովել է հանքարդյունաբերության և հարակից վերամշակող արդյունաբերության արտադրանքը, մինչդեռ ծառայությունների արտահանման աճին հիմնականում նպաստել է նոր զարգացող զբոսաշրջության հատվածը:

5. **ԵԱՏՄ-ին անդամակցությամբ պայմանավորված աճի փուլ (2015-2019 թվականներ).** չնայած 2014 թվականի տարեվերջին տեղի ունեցած դրամի արժեզրկմանը՝ որոշ ապրանքատեսակների արտաքին պահանջարկի անկմանը և դրա արդյունքում տեղի ունեցած ապրանքաշրջանառության կրճատմանը, ինչպես նաև 2014 թվականից հետո Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների արդյունքում 2015 թվականին առաջացած էկզոգեն անորոշություններին՝ 2016-2019 թվականներին գրանցվել է ապրանքների արտահանման ու ներմուծման միջին տարեկան աճ համապատասխանաբար 21.1% և 21.0%, իսկ ծառայությունների պարագայում՝ 13.3% ու 16.3%: 2015 թվականի անկումից հետո, հիմնականում պայմանավորված ռուսական շուկայում առաջացած հնարավորություններով, գյուղատնտեսական ու սննդի արդյունաբերության արտադրանքի արտահանումն աճել է, իսկ նորահայտ տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (S<S) ոլորտի զարգացումը նպաստել է ծառայությունների արտահանման աճին: Մեկ այլ կարճաժամկետ գործոն, որը նպաստել է ապրանքների արտահանման աճին՝ 2018-2019 թվականներին ավտոմեքենաների ներմուծումն ու ԵԱՏՄ այլ երկրներ վերաարտահանումն էր՝ մինչև Հայաստանում ԵԱՏՄ միասնական մաքսատուրքերի կիրառումը:

6. **Տնտեսական շոկի փուլ (2020-2023 թվականներ).** 2020 թվականի COVID-19 համավարակը և 44-օրյա պատերազմը զգալի բացասական ազդեցություն են թողել Հայաստանի տնտեսության վրա, ինչը կարելի է համարել բացասական շոկի փուլ: 2021 թվականին նկատվել են արտահանման և ներմուծման ծավալների վերականգնման միտումներ, սակայն չի հաջողվել վերականգնել 2019 թվականի ցուցանիշները: 2022-2023 թվականներին զգալիորեն աճել է արտահանումը Ռուսաստան

և առանձին ապրանքների դեպքում նաև ԱՄԷ ու Հոնկոնգ՝ հիմնականում պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությամբ: Բացի այդ, համաշխարհային գնաճը և գների փոփոխությունները նպաստել են առևտրի արժեքի անվանական աճին: Եթե 2019 թվականին ապրանքների արտահանման ծավալը կազմել է ՀՆԱ-ի 19.4%-ը, ապա 2023 թվականին այն հասել է 35.3%-ի: Ծառայությունների արտահանման ծավալը նույնպես շարունակական աճ է գրանցել 2023 թվականին, հատկապես ՏՀՏ ոլորտի ծառայությունների արտահանման աճի առումով: Եթե 2019 թվականի դրությամբ ծառայությունների արտահանման ծավալը կազմել է ՀՆԱ-ի 17.9%-ը, ապա 2023 թվականին այն հասել է 23.2%-ի:

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2013-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐ, ԸՆԹԱՑԻՎ ԳՆԵՐՈՎ (ՄԻԼԻՈՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ)


	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Ապրանքներ											
Արտահանում	1 636	1 698	1 624	1 892	2 388	2 725	3 361	2 719	3 277	5 711	8 647
Ներմուծում	3 832	3 754	2 810	2 869	3 793	4 488	5 083	4 101	4 781	7 577	11 162
Առևտրային հաշվեկշիռ, ապրանքներ	-2 196	-2 055	-1 186	-977	-1 405	-1 763	-1 722	-1 382	-1 505	-1 865	-2 515
Ծառայություններ											
Արտահանում	1 522	1 622	1 514	1 672	2 023	2 202	2 434	1 099	1 735	4 369	5 630
Ներմուծում	1 645	1 734	1 609	1 601	1 861	2 192	2 521	981	1 338	2 648	3 319
Առևտրային հաշվեկշիռ, ծառայություններ	-123	-111	-95	71	162	11	-87	118	397	1 720	2 311
Ընդամենը Առևտրային Հաշվեկշիռ	-2 320	-2 167	-1 281	-906	-1 244	-1 753	-1 809	-1 264	-1 108	-145	-203

Աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ, վճարային հաշվեկշռի վիճակագրություն

7. 1990-ականներին և 2000-ականներին Հայաստանի ընդհանուր արտահանման մեջ ծառայությունների մասնաբաժնի աստիճանական աճից հետո մինչև 2020 թվականը ծառայությունների տեսակարար կշիռը դադարել է աճել և մնացել է Հայաստանի ընդհանուր արտահանման շուրջ 45%-ի մակարդակում: Ընդ որում, 1990-ականներին և 2000-ական թվականներին ծառայությունների արտահանման անվանական միջին աճն ավելի բարձր է եղել, քան ապրանքների արտահանմանը (1990-ականներին, համապատասխանաբար, 41.5%-ը 7.9%-ի դիմաց և 2000-ականներին 21.1%՝ 10.5%-ի դիմաց), մինչդեռ 2010-ականներին ապրանքների արտահանումն ավելի արագ է աճել (12.1%՝ 10.2%-ի դիմաց):

8. Չնայած 2020 թվականին COVID-19-ի՝ ծառայությունների արտահանման վրա ունեցած բացասական ազդեցությանը, 2020-2023 թվականների ընթացքում ծառայությունների արտահանումը կրկին ավելի արագ է աճել՝ համեմատած ապրանքների արտահանման հետ, որը հիմնականում պայմանավորված էր ՏՀՏ ծառայությունների արտահանման առաջանցիկ տեմպերով:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ ԸՍՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, (ՏՈԿՈՍ)



Աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ, վճարային հաշվեկշռի վիճակագրություն

9. 2000-ականներին և 2010-ականներին ծառայությունների արտահանման աճը հիմնականում ապահովել է զբոսաշրջության ոլորտը, մինչդեռ 2020-2023 թվականներին ՏՀՏ ծառայությունների արտահանման աճի մասով ավելի մեծ արագացում է նկատվել: 2022 թվականից մեծ աճ է գրանցվել նաև ֆինանսական և ապահովագրական ծառայությունների արտահանման ոլորտում:

ԱՐՅՈՒՍԱԿ 2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ՝ ԸՍՏ ՏԵՍԱԿԻ 2013-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐ, (ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ)

	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	PSUS ¹ , 2013-2023 թվականներ (Տոկոս, %)
Ընդամենը ծառայությունների արտահանում	1 522	1 622	1 514	1 672	2 023	2 202	2 434	1 099	1 735	4 369	5630	12.3
Ճանապարհոր- դություն	880	966	936	1 017	1 204	1 329	1 528	287	784	2 439	3009	13.0
Հեռահաղորդակ- ցության,	111	130	131	173	212	236	262	328	382	711	1074	25.5

¹ Բաղադրյալ տարեկան աճի տեմպ:

	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	PSUS ¹ , 2013-2023 թվականներ (Տոկոս, %)
համակարգչային և տեղեկատվական ծառայություններ												
Տրանսպորտ	172	182	164	189	232	256	275	232	304	569	900	18
Ֆինանսական ծառայություններ, ապահովագրություն և կենսաթոշակային ծառայություններ	30	31	25	28	36	42	50	48	49	259	237	23
Շինարարություն	222	211	163	150	207	191	178	78	86	130	88	-8.9
Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ	6	5	3	17	21	36	27	37	41	111	201	42
Այլ գործնական ծառայություններ	53	50	43	45	49	46	43	42	36	95	70	2.9
Անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ	19	19	19	19	19	19	19	10	11	11	12	-1.3
Պետական ապրանքներ և ծառայություններ	27	26	29	32	41	44	45	33	37	38	34	2.4
Տեխնիկական և սպասարկման վերանորոգման ծառայություններ	2	2	2	3	3	3	5	3	4	5	5	8.3

Աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ, վճարային հաշվեկշռի վիճակագրություն

10. Ռուսաստանի՝ որպես ապրանքների արտահանման հիմնական ուղղության մասնաբաժինն աստիճանաբար աճել է 2015-2021 թվականների ընթացքում՝ 16.5%-ից հասնելով 27.9%-ի, սակայն 2022-2023 թվականներին աճը եղել է շատ ավելի մեծ՝ կազմելով համապատասխանաբար 45.4% և 40.6%:

11. 2015-2021 թվականներին Ռուսաստանի՝ որպես ապրանքների արտահանման ուղղության, մասնաբաժնի աճը հիմնականում պայմանավորված է ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությամբ, մինչդեռ 2022-2023 թվականներին Ռուսաստանի մասնաբաժնի զգալի աճն առավելապես պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտությունից բխող գործոններով:


12. 2013-2021 թվականներին հանքահումքային արտադրանքը (որի 75-80%-ը բաժին է ընկնում պղնձին) եղել է արտահանվող հիմնական ապրանքային խումբը: Նույն ժամանակահատվածում արտահանման կառուցվածքում մասնաբաժնով

երկրորդ ապրանքային խումբը՝ 20-24% կշռով, եղել է պատրաստի սննդի արտադրանքը՝ ներառյալ խմիչքները և ծխախոտը:

13. 2022 թվականից սկսած՝ Հայաստանի արտահանման ապրանքային կառուցվածքը զգալիորեն փոխվել է: Մասնավորապես, ընդհանուր արտահանման կառուցվածքում զգալիորեն աճել են թանկարժեք քարերի ու մետաղների (հիմնականում ոսկու և ադամանդների), ինչպես նաև մեքենաների, սարքավորումների ու տրանսպորտային միջոցների ընդհանուր արտահանման մասնաբաժինները: Վերջին երկուսը հիմնականում վերաարտահանում էին:

14. Չնայած պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալի աճին՝ դրա մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ 2022-2023 թվականներին նվազել է՝ պայմանավորված «նոր» ապրանքախմբերի արտահանման ավելի մեծ աճով:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ՀՀ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, (ՏՈԿՈՍ)



Աղբյուր՝ Արմաստատ

15. Ռուսաստանի՝ որպես արտահանման հիմնական ուղղության մասնաբաժնի աճը հանգեցրել է Հայաստանի արտահանման շուկայական կենտրոնացման էական աճի: Այսպես, Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը, որն օգտագործվում է կենտրոնացվածությունը գնահատելու նպատակով, Հայաստանի համար՝ ըստ արտահանման շուկաների, 2023 թվականին կազմել է 2463՝ 2019 թվականի 1330-ի փոխարեն²:

² Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը տատանվում է 0-10,000 միջակայքում, որտեղ 10,000-ը կենտրոնացվածության ամենաբարձր ցուցանիշն է:

16. 2015-2020 թվականներին Հայաստանի արտահանման շուկայական կենտրոնացումն աստիճանաբար աճել է, իսկ 2022 թվականին ռուս-ուկրաինական հակամարտության սկզբից ի վեր արտահանման կառուցվածքում զգալի փոփոխություն է տեղի ունեցել, ինչի արդյունքում արտահանման շուկաների կենտրոնացվածությունն էլ ավելի է մեծացել:

17. Հայաստանի արտահանումն ըստ ապրանքների համեմատաբար ավելի քիչ է կենտրոնացված, քան արտահանումն ըստ շուկաների: Ի լրումն՝ ռուս-ուկրաինական հակամարտության էսկալացիայից հետո արտահանվող ապրանքների կառուցվածքի փոփոխությունները հանգեցրել են 2022 թվականին ապրանքների արտահանման կենտրոնացվածության նվազմանը: 2023 թվականին, սակայն, ապրանքների արտահանման կենտրոնացվածությունը որոշակիորեն մեծացել է:

18. Արտահանվող ապրանքախմբերի թվի աճը հիմնականում պայմանավորված է վերաարտահանմամբ, ինչն էլ հանգեցրել է արտահանման՝ ըստ ապրանքների կենտրոնացվածության, նվազման: Այնուամենայնիվ, այս փոփոխությունը ենթադրաբար կայուն չէ, քանի որ կենտրոնացվածության մասով, հավանաբար, կրկին արագ աճ կարձանագրվի, եթե արտաքին միջավայրային գործոնները փոխվեն:

19. 2000 թվականից հետո տնտեսական բարդության ինդեքսով (այսուհետ՝ ՏԲԻ) չափվող Հայաստանի ապրանքային արտահանման որակը զգալիորեն նվազել է: Այսպես, Հայաստանը, երկրի արտադրողական գիտելիքների ներկա վիճակը գնահատող Հարվարդի աճի հետազոտական կենտրոնի տվյալներով, 2002 թվականին զբաղեցրել է 29-րդ տեղը՝ ՏԲԻ-ի 0.66 ցուցանիշով, մինչդեռ 2021 թվականին երկիրը 91-րդ տեղում էր՝ -0.52 համապատասխան ցուցանիշով:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. ՀՀ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ 1995-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐ



Աղբյուր՝ Հարվարդի աճի հետազոտական կենտրոն <https://atlas.cid.harvard.edu/rankings>

20. Այսպիսով՝ Հայաստանի տնտեսությունը շարունակում է մնալ ամենաարագ զարգացող տնտեսություններից մեկը տարածաշրջանում: Այս տնտեսական աճը կարելի է վերագրել վերջին տասնամյակում գրանցված արտադրողականության աճին, տնտեսության կառուցվածքային փոփոխություններին և 2022-2023 թվականներին առաջացած հնարավորությունների օգտագործմանը:

21. Արտահանման շուկայական կենտրոնացվածությունը և արտահանման որակը Հայաստանի արտահանման հետագա աճի և, հետևաբար, տնտեսական աճի, հիմնական ռիսկերն են:

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

22. Աշխարհաքաղաքական միտումների և մարտահրավերների ազդեցությունն էական նշանակություն ունի համաշխարհային տնտեսության համար՝ Հայաստանի համար հեռահար հետևանքներով:

23. Հայաստանն Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) անդամ է 2003 թվականից և օգտվում է խտրականության բացառման սկզբունքից, որը հայտնի է որպես ազգերի առավել բարենպաստ ռեժիմ (Most Favorable Nation) և գործում է ԱՀԿ բոլոր անդամ երկրների հետ փոխհարաբերություններում: Բացի այդ, Հայաստանը ազգերի առավել բարենպաստության

ռեժիմ կիրառում է այն դեպքերում, երբ դա նախատեսված է երրորդ երկրների հետ միջազգային պայմանագրերով:

24. Հայաստանը վավերացրել է «ԱՀԿ ստեղծման մասին» Մարաքեշի համաձայնագիրը փոփոխող արձանագրությունը 2017 թվականի մարտի 20-ին: Այն ներառում է դրույթներ ապրանքների (ներառյալ տարանցիկ ապրանքների) տեղափոխման, բացթողման և մաքսագերծման գործընթացների արագացման, մաքսային ընթացակարգերի ներդաշնակեցման ու միջազգային ստանդարտների կիրառման, ինչպես նաև կողմերի մաքսային և այլ համապատասխան մարմինների միջև արդյունավետ համագործակցության վերաբերյալ:

25. 2015 թվականին Հայաստանը միացել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին (այսուհետ՝ ԵԱՏՄ պայմանագիր): ԵԱՏՄ պայմանագրի համաձայն՝ Կողմերն ապահովում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շարժի ազատությունը: Անդամ երկրների միջև առևտուրն ազատված է նաև ոչ սակագնային կարգավորումներից:

26. Քանի որ Հայաստանի և ԵԱՏՄ մյուս անդամ երկրների միջև ընդհանուր սահման չկա, ապրանքները տեղափոխվում են «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փոխադրվում են օդային, էլեկտրահաղորդման կամ խողովակաշարերի միջոցներով: Որպես ԵԱՏՄ անդամ՝ Հայաստանը կիրառում է ԵԱՏՄ օրենսդրությունը սակագնային և ոչ սակագնային կարգավորումների համար:

27. Չնայած ԵԱՏՄ անդամակցության ընձեռած հնարավորություններին, Հայաստանը շարունակում է բախվել մի շարք խոչընդոտների՝ պայմանավորված ավանդական շուկաների՝ մասնավորապես Ռուսաստանի, հետ տնտեսական բարձր փոխկապակցվածությամբ: Ռուսաստանի զգալի կշիռը արտահանման կառուցվածքում հանգեցնում է դիվերսիֆիկացման ցածր մակարդակի և բարձրացնում է տնտեսության խոցելիությունը արտաքին շուկերի և ՌԴ շուկայի ներքին փոփոխությունների նկատմամբ:

28. 2015 թվականի հունվարի 1-ից հետո՝ պայմանավորված ԵԱՏՄ անդամակցությամբ, Հայաստանը, պահպանելով մինչ այդ գործող երրորդ երկրների հետ ազատ առևտրի մասին կնքած համաձայնագրերով սահմանված արտոնությունները, այլևս չի կարող կնքել նման համաձայնագրեր երկկողմ ձևաչափով: Ազատ առևտրի ռեժիմը երրորդ երկրի հետ այսուհետ կարող է հաստատվել բացառապես ԵԱՏՄ շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) և բոլոր անդամ երկրների կողմից բազմակողմ ձևաչափով կնքած և այդ կողմի միջև ազատ առևտրի համաձայնագրերի հիման վրա:

29. Հայաստանը ստորագրել է ազատ առևտրի մասին երկկողմ համաձայնագրեր Մոլդովայի (1993), Ուկրաինայի (1996), Վրաստանի (1995), Բելառուսի

(2000), Ղազախստանի (1999), Ղրղզստանի (1994), Տաջիկստանի (1994) և Թուրքմենստանի (1995) հետ: 2022 թ. հոկտեմբերի 1-ից Ուկրաինայի կառավարությունը սկսել է նշված պայմանագրից դուրս գալու գործընթացը:

30. Հայաստանը 2011 թվականի հոկտեմբերի 18-ին ստորագրել է Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ազատ առևտրի համաձայնագիրը (ԱՊՀ ԱԱՀ) Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Հայաստանի, Ուկրաինայի, Ղրղզստանի, Մոլդովայի և Տաջիկստանի հետ, որը Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2012 թվականին, և որին 2013 թ.-ին միացել է Ուզբեկստանը՝ ստորագրելով համապատասխան արձանագրություն: 2022 թ. հոկտեմբերի 1-ից Ուկրաինան սկսել է նշված պայմանագրից դուրս գալու գործընթացը:


31. Վրաստանը Հայաստանի համար հանդիսանում է հիմնական տարանցման ուղի ԵԱՏՄ փոխադարձ առևտրի շրջանակում ապրանքներ տեղափոխելու համար: Թեև երկու երկրներն ունեն բարիդրացիական հարաբերություններ և ազատ առևտրի համաձայնագիր, ժամանակ առ ժամանակ ապրանքների այլ երկրներ տարանցման առումով որոշ խնդիրներ են առաջանում:

32. Հայաստանն օգտվել կամ օգտվում է գործընկեր երկրների արտոնությունների ընդհանրացված համակարգից (Generalized System of Preferences, GSP), ընդհանուր արտոնյալ սակագների ծրագրից (General Preferential Tariff Program, GPT) և արտոնությունների ընդհանրացված ու համալրված համակարգից (GSP+): Այդ համակարգերից օգտվելու մասով Հայաստանի համար առկա են մի շարք մարտահրավերներ: Մասնավորապես, 2022 թ. հունվարի 1-ից Հայաստանը չի հանդիսանում ԵՄ «GSP+» արտոնյալ առևտրային համակարգի շահառու երկիր, քանի որ Համաշխարհային բանկի կողմից դասակարգվել է միջինից բարձր եկամուտ ունեցող տնտեսություն (ՀՆԱ մեկ շնչի հաշվով): Այս մասով կա էական ռիսկ, որ Հայաստանը, ի լրումն նման դեպքերի, կարող է դադարել լինել նաև մյուս գործընկեր երկրների կողմից ներկայումս գործող արտոնությունների ընդհանրացված համակարգի շահառու:

33. Մյուս կողմից, Հայաստանը, լինելով մի շարք գործընկեր երկրների արտոնությունների ընդհանրացված համակարգի շահառու երկիր կամ ունենալով ազատ առևտրի երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր, չի կարողանում արդյունավետ կերպով օգտագործել դրանց ընձեռած հնարավորությունները: Այսպես, Հայաստանը չի կարողանում լիարժեք օգտվել առևտրային գործընկերների կողմից տրված արտոնյալ առևտրային ռեժիմներից և այդ երկրների հետ առևտրի շատ ցածր ինտենսիվություն ունի: Ամենաբարձր ինտենսիվությունը Հայաստանի և Սերբիայի միջև է, որն ընդամենը **0.76% է**: Սա վկայում է այն մասին, որ 2019-2022 թվականներին Հայաստանի մասնաբաժինը Սերբիայի ներմուծման մեջ արտոնյալ

մաքսատուրքերի համար թույլատրելի կատեգորիաներում կազմել է ընդամենը **0.76%**:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ԱՌԵՎՏՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԱՌԵՎՏՐԻ ԱՐՏՈՆՅԱԼ ՌԵԺԻՄՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ



Նշում. Առևտրի ինտենսիվության ինդեքսը 2019-2022 թվականներին արտոնյալ ռեժիմով ապրանքների միջին տարեկան արտահանումն է Հայաստանից առևտրային արտոնություններ տրամադրող երկիր՝ բաժանած աշխարհից առևտրային արտոնություններ տրամադրող երկիր արտոնյալ ռեժիմով ապրանքների միջին տարեկան ներմուծումը: Իրանի պարագայում հաշվված է 2018-2021 թվականների համար: Աղբյուր՝ հաշվարկները կատարված են՝ հիմնվելով ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարանի (UN Comtrade) տվյալների վրա

34. Հայաստանյան արտահանողները բախվում են նաև ոչ սակագնային առևտրային խոչընդոտների, մասնավորապես, հայկական ապրանքների հիմնական ներկրողները ներմուծվող ապրանքների նկատմամբ կիրառում են տարբեր ոչ սակագնային կարգավորման միջոցներ (Non-Tariff Measures, NTM):

35. ԵՄ ներմուծվող ապրանքների 94.0%-ը պետք է համապատասխանի առնվազն մեկ ոչ սակագնային միջոցի: ԱՄՆ-ում ոչ սակագնային միջոցները կիրառելի են ապրանքների 62.0%-ի դեպքում: Այս միջոցառումները հիմնականում ներառում են առևտրի տեխնիկական խոչընդոտներ (Technical Barriers to Trade) և սանիտարական ու փոսանիտարական միջոցառումներ (Sanitary and Phytosanitary Measures, SPS): Մասնավորապես, ԱՄՆ ներմուծվող ապրանքների գրեթե 60.0%-ը և ԵՄ ներմուծվող ապրանքների 93.0%-ը պետք է համապատասխանի առնվազն մեկ տեխնիկական պահանջի, ինչպիսիք են արտադրանքի որակի ու կատարողականի պահանջները, պիտակավորման պահանջները, ստուգման և սերտիֆիկացման պահանջները և այլն:

36. Ներկայումս արտահանման կարգավորման ոլորտում ձևավորված է բազմաբնույթ և մասնագիտացված կառուցվածք, որը սակայն դեռևս պահանջում է առավել համակարգված մոտեցում: Արտահանման քաղաքականության մշակման և խթանման գործընթացում հիմնական պատասխանատու կառույցներն են Էկոնոմիկայի նախարարությունը և «Էնթերփրայզ Արմենիա» ներդրումների

աջակցման կենտրոնը, որոնց ներգրավվածությունը պայմանավորված է կանոնադրական լիազորություններով:

37. Վերջին չորս-հինգ տարիների ընթացքում Հայաստանի ինստիտուցիոնալ կարողություններն արտահանման քաղաքականության մշակման և իրականացման համար զգալի անկում են ապրել: Պատմականորեն, պարտականությունները բաշխվել են այնպիսի սուբյեկտների միջև, ինչպիսին է Էկոնոմիկայի նախարարությունը (նախկինում՝ Ներդրումների և տնտեսական զարգացման, առևտրի և արդյունաբերության նախարարությունը):

38. Արտաքին գործերի նախարարությունը տրամադրել է աջակցություն առաջատար արտահանողներին, սակայն 2019 թվականից հետո իրականացված ինստիտուցիոնալ փոփոխությունների արդյունքում որոշ տնտեսական բնույթի գործառույթներ փոխանցվել են այլ մարմինների:

39. Էկոնոմիկայի նախարարությունում արտահանման խթանման համար պատասխանատու ստորաբաժանում ստեղծվել է 2023 թվականին, Միջազգային համագործակցության վարչության կազմում: Արտահանման զարգացման ուղղությամբ աշխատանքներ իրականացվել են նշված ստորաբաժանման արտահանման խթանման բաժնի կողմից՝ բացառապես կենտրոնանալով միջազգային ցուցահանդեսներում հայաստանյան արտադրողների այցելությունների և ներկայացվածության ապահովման վրա:

40. Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունները, սահմանափակ ռեսուրսների և տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համեմատաբար փոքր ներգրավվածության պայմաններում, շարունակել են հնարավորության սահմաններում աջակցել հայաստանյան արտահանողներին, սակայն առկա են լրացուցիչ հնարավորություններ այս գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

41. Թեև Հայաստանում գործում է արտահանման ապահովագրական գործակալություն, ներկայումս այն բախվում է այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են վերաապահովագրման սահմանափակումները, մասնավորապես, վերաապահովագրողները հրաժարվում են վերաապահովագրել այն գործարքները, որոնք այս կամ այն կերպ կապված են պատժամիջոցների տակ կամ նման վտանգի տակ գտնվող սուբյեկտների հետ: Նշված հիմնախնդիրների համատեքստում՝ ներկայումս ստեղծվել է ԵԱՏՄ շրջանակում վերաապահովագրական կազմակերպություն, ինչը վերաապահովագրելու է դեպի ՌԴ արտահանման գործարքները: Ի լրումն՝ միաժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել «Սվիսս Ռե» շվեյցարական վերաապահովագրական ընկերության հետ դեպի ՌԴ արտահանման գործարքների վերաապահովագրման վերականգնման ուղղությամբ:

42. 2018-2022 թվականներին արտահանման խթանմանն ուղղված ծրագրի ծախսերում արձանագրվել է մշտական մեծ թերակատարում (շուրջ 37.0%), 2023 թվականին թեև արձանագրվել է թերակատարում, բայց շատ ավելի քիչ (ընդամենը 2.0%): Ծրագրերը հիմնականում ուղղված են եղել արտահանման խթանման նպատակով միջազգային ցուցահանդեսներում, աշխատանքային ֆորումներում և համանման միջոցառումներում հայ արտադրողների ներկայացվածության ապահովմանը:

43. Հայաստանը բախվում է զգալի մարտահրավերների կապված որակի ենթակառուցվածքների և շուկաների լոգիստիկ հասանելիության հետ:

44. Ենթակառուցվածքների տեսանկյունից Հայաստանն առերեսվում է սննդի անվտանգության և ISO ստանդարտներին համապատասխանելու բարդությունների՝ պայմանավորված բարձրակարգ շուկաներ մուտք գործելու համար անհրաժեշտ ծախսերի և այդ շուկաներում ապրանքի իրացման դիմաց ստացված հասույթի ոչ շահեկան հարաբերակցությամբ՝ հատկապես գյուղատնտեսության և մշակող արդյունաբերության ոլորտներում: Ռիսկերի համապարփակ վերլուծության և սննդի անվտանգության ծրագրերի բացակայությունն առաջացնում է որակի հետ կապված խնդիրներ: Միևնույն ժամանակ, սննդամթերքի անվտանգության վերահսկողությունն ունի համակարգման և միջազգային լավագույն փորձի կիրառման բացեր, ինչը նվազեցնում է վերահսկողության արդյունավետությունը և սահմանափակում ոլորտի զարգացման հնարավորությունները:

45. Հնացած արտադրական պրակտիկան բացասաբար է ազդում արտադրանքի որակի և ստանդարտներին համապատասխանության վրա: Մակնշման և փաթեթավորման միջազգային չափանիշներից շեղումները դժվարացնում են արտահանումը:

46. Լոգիստիկ խնդիրներից առաջնայինն այն է, որ Հայաստանը չունի ուղիղ ելք դեպի ծով և սահմանների փակման պատճառով բախվում է մարտահրավերների՝ հարևան երկրների միջոցով տարանցիկ փոխադրումներ կազմակերպելիս: Այսպես, փակ սահմանները և աշխարհաքաղաքական խնդիրները խոչընդոտում են Թուրքիայի տարածքով բեռների ուղիղ տարանցմանը՝ չնայած մեծ ռազմավարական տարանցման ներուժին:

47. Բեռնատարների քաշի և բեռների տեսակների բարձր ծախսերն ու սահմանափակումները, ինչպես նաև վառելիքի ոչ մրցակցային գնի կիրառությունն օտարերկրյա փոխադրողների նկատմամբ խոչընդոտում են Իրանով արդյունավետ տարանցումը:

48. Թեև Վրաստանն ապահովում է կարևոր տարանցիկ երթուղիներ, Վերին Լարսի սահմանակետում առկա խնդիրները, ինչպիսիք են սահմանային ստուգումների հետ կապված ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող դժվարությունները

կամ անցակետի աշխատանքի սեզոնային խափանումները, ազդում են տարանցման հուսալիության վրա:

49. «Զվարթնոց» օդանավակայանից բեռնափոխադրումների ուղղությունները սակավաթիվ են և բեռնափոխադրման կարողությունները՝ սահմանափակ:

50. Ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում էապես բարդացել, անգամ գրեթե անհնարին է դարձել ՌԴ և Բելառուսի տարածքով իրականացնել ապրանքափոխադրումներ դեպի ԵՄ:

2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԵՍԼԱԿԱՆՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ

51. Արտահանման ոլորտում պետական քաղաքականության տեսլականն է՝

**Արտահանման վրա հիմնված տնտեսական աճի
խթանման միջոցով նպաստել երկրի բնակչության
բարեկեցության աճին և տնտեսության կայուն
զարգացմանը:**

52. Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում են հետևյալ ազդեցության ցուցանիշները՝

- Մինչև 2030 թվականը տեղական արտահանումը կաճի 1.7 անգամ՝ հասնելով 16.9 մլրդ ԱՄՆ դոլարի՝ 9.3% միջին տարեկան աճով: Նշված ժամանակահատվածում մինչև 2030 թվականը ծառայությունների արտահանումը կհասնի 10.3 մլրդ ԱՄՆ դոլարի՝ 10.4% միջին տարեկան աճով, իսկ ապրանքների տեղական արտահանումը՝ 6.6 մլրդ ԱՄՆ դոլարի՝ 7.8% միջին տարեկան աճով.
- Տեղական արտահանման նպաստումը ՀՆԱ աճին մինչև 2030 թվականը կդառնա 2.92 տոկոսային կետ.
- Առևտրի հաշվեկշիռ (ընդամենը արտահանմամբ) ՀՆԱ հարաբերակցությունը 2030 թվականին կկազմի -6.27% (2019 թվականի³ - 13.34%-ի փոխարեն).
- Մինչև 2030 թվականը արտահանելի ոլորտների աճը կկազմի 10% (2023 թվականի 3.4%-ի փոխարեն).
- Տնտեսության արտահանելի ոլորտներում մեկ աշխատողի հաշվով համախառն ավելացված արժեքը 2030 թվականին կհասնի 18.6 միլիոն դրամի (2023 թվականի 14.4 միլիոն դրամի փոխարեն):

53. Ազդեցության վերոնշյալ թիրախային ցուցանիշներին ակնկալվում է հասնել հետևյալ ռազմավարական հենասյուների ուղղությամբ համակարգված աշխատանքների իրականացման միջոցով՝

- 1) արտահանմանը նպաստող մրցունակ միջավայրի ապահովում.
- 2) ենթակառուցվածքների զարգացում և լոգիստիկ հասանելիության ապահովում.
- 3) արտահանողների և նրանց կարողությունների զարգացում.

³ Որոշ դեպքերում համեմատության համար օգտագործված են ոչ թե 2023 թվականի վերջին ելակետային ցուցանիշները, այլ 2019 թվականի ցուցանիշները, քանի որ դրանք նվազագույնս են ենթարկված ազդեցության՝ վերջին տարիների աշխարհաքաղաքական իրադարձությունների արդյունքում առաջացած դրական և բացասական ազդակներից:

- 4) շուկաների և հաճախորդների ընդլայնում.
- 5) արտահանման խթանում և ֆինանսավորում:

54. Տեսլականի իրագործման համար սահմանվում են հետևյալ ռազմավարական նպատակները՝

ՌՆ1	Տնտեսական աճի ու մրցունակության համար նպաստավոր միջավայրի ստեղծում՝ միջազգային առևտրային հարաբերությունների խթանման և երկրի գործարար միջավայրի բարելավման միջոցով
ՌՆ2	Աշխարհագրական դիրքից բխող ռազմավարական առավելությունների ձեռքբերում՝ ենթակառուցվածքների զարգացման, գործընկերության հաստատման և նորարարական ապրանքների ու լոգիստիկ լուծումների ներդրման միջոցով
ՌՆ3	Արտահանման աճի խթանում՝ ազգային արտահանողների առևտրային ներուժի բարձրացման և բարդ ապրանքների ու ծառայությունների զարգացման խթանման միջոցով
ՌՆ4	Արտաքին շուկաների և ապրանքների դիվերսիֆիկացում՝ հնարավորությունների ընդլայնման, դիմակայունության ու կենսունակ տնտեսական միջավայրի համար ամուր հիմքեր ստեղծելու միջոցով
ՌՆ5	Արտահանման դիմակայուն և ադապտիվ էկոհամակարգի ստեղծում՝ արտահանման խթանման ծրագրերի ներդրման և համապատասխան ֆինանսական ու ոչ ֆինանսական ենթակառուցվածքների ձևավորման միջոցով

55. Ծրագրի արդյունքային շրջանակը բաղկացած է տեսլականից, 5 ռազմավարական նպատակներից, 14 ենթածրագրերից և դրանց իրականացմանն ուղղված 69 միջոցառումներից: Տեսլականի իրականացման մշտադիտարկման համար մշակվել են 5 ցուցանիշներ, ռազմավարական 5 նպատակների համար՝ 9 ցուցանիշներ, 14 ծրագրերի համար՝ 19 ցուցանիշներ: Ընդհանուր առմամբ, ամբողջ ծրագրի՝ բոլոր մակարդակներում իրականացման մշտադիտարկման համար անհրաժեշտ ցուցանիշների քանակը 146-ն է:

56. Միջոցառումները դիտարկվելու են ռազմավարությամբ հստակեցված ժամանակահատվածի համար և կիրառվելու են՝ ելնելով տվյալ ժամանակահատվածի հարկաբյուջետային քննարկումների արդյունքում վեր հանված բյուջետային հնարավորություններից: Ֆինանսավորման ծավալը հիմնված է լինելու նաև տվյալ միջոցառումների տարեկան վերանայման վրա, որը ներառելու և օգտագործելու է նախորդ տարիների իրականացման փորձի վերլուծությունը:

57. Ռազմավարական ծրագրի թիրախային ցուցանիշների վերին շեմի ապահովման համար անհրաժեշտ է ռազմավարական գործողությունների լիարժեք իրագործում:

58. Ելնելով ներկայումս Հայաստանի արտահանման առջև ծառացած մարտահրավերներից և այն ուղղություններից, որոնք սահմանված են որպես առաջնահերթություն Հայաստանի արտահանման համար, ռազմավարական ծրագիրն առանձնացնում է հետևյալ գերակայությունները՝

- արտահանման վրա հիմնված տնտեսական աճի ապահովում,
- արտահանման նկատմամբ համապարփակ և համապետական մոտեցման ձևավորում,
- արտահանման զարգացում՝ նորարարությունների և տեխնոլոգիաների հիման վրա,
- բարձր ավելացված արժեքով և ավելի քիչ ծախսատար ապրանքների արտահանման խթանում:

59. Հիմք ընդունելով վերը նշված ռազմավարական գերակայությունները՝ մշակվել են ռազմավարական ծրագրի նպատակները:

60. Ռազմավարական ծրագրի նպատակներն իրագործելի դարձնելու համար՝ ըստ հենասյուների մշակվել են համապատասխան միջոցառումներ ենթադրող ծրագրեր, որոնք բաժանվում են երկու խմբի՝ ընդհանուր և ապրանքային միտվածության միջոցառումներ:

61. Ընդհանուր միջոցառումները վերաբերում են բոլոր արտահանողներին և բոլոր ապրանքային խմբերին, առանց բացառության, միտված լինելով խթանելու երկրի արտահանման ծավալի աճը և բարելավելու արտահանողների հնարավորություններն ու կարողությունները: Ապրանքային միտվածության միջոցառումները ենթադրում են գործողությունների ամբողջականություն, որոնք կխթանեն համապարփակ և բազմաշերտ հետազոտության արդյունքում ընտրված 25 ապրանքային խմբերի արտահանումը:

2.2 ԹԻՐԱԽԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՇՈՒԿԱՆԵՐ

62. Հայաստանի արտահանման տեսանկյունից առաջնահերթություն հանդիսացող 25 ապրանքների ընտրությունը տեղի է ունեցել 2 փուլով իրականացված

վերլուծության արդյունքում: Վերլուծության առաջին փուլում մշակվել է համապարփակ, միջազգային լավագույն փորձն ընդգրկող մեթոդաբանություն, որի արդյունքներով վեր է հանվել՝ Հայաստանի արտահանման տեսանկյունից ներուժ ունեցող 188 ապրանքների նախնական ցանկ, որոնցից՝

- 40 ապրանք, որոնք ներկայումս արտահանվում են Հայաստանից՝ բացահայտված Արտահանման ներուժի ցուցանիշի (անգլերեն համարժեքը՝ Export Potential Indicator) շրջանակներում Միջազգային առևտրի կենտրոնի կողմից,

- 49 ապրանք, որոնք արտադրվում են Հայաստանում, սակայն դրանց արտահանման ներուժը դեռևս մնում է չօգտագործված՝ բացահայտված Ապրանքի դիվերսիֆիկացման ցուցանիշի (անգլերեն համարժեքը՝ Product Diversification Indicator) շրջանակներում Միջազգային առևտրի կենտրոնի կողմից,

- 2 ապրանք (ծխախոտ և կիսամշակված ոսկի), որոնք մեծ մասնաբաժին ունեն Հայաստանի ընթացիկ արտահանման մեջ, բայց չեն դիտարկվել ԱՄԿ-ի կողմից նշյալ ցուցանիշների շրջանակներում՝ պայմանավորված վերջինիս կողմից դիտարկվող տարբեր սահմանափակումներով (ռիսկ մարդու համար, արտադրության ընթացքում արտանետվող նյութեր, թափոններ և այլն),

- 97 ապրանք, որոնք բացահայտվել են Հայաստանի արտադրության կառուցվածքի մանրամասն ուսումնասիրության արդյունքում, որը ներառել է այդ ապրանքների՝ ըստ ապրանքախմբի և արտադրության ծավալի դասակարգումն ու նշված ապրանքների արտահանման մանրամասն վերլուծությունը և համեմատությունը:

63. Վերլուծության երկրորդ փուլում դիտարկված 188 ապրանքներից ընտրվել են 25 ուղենիշային ապրանքներ, որոնք առավելագույն ցուցանիշն են ունեցել ինտեգրված բաղադրյալ ինդեքսի կիրառության արդյունքում, որը, իր հերթին, բաղկացած է 7 ցուցանիշներից և ընդգրկում է այնպիսի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են ավելացված արժեքը, աշխատանքի արտադրողականությունը, Հայաստանի արտահանման ապրանքային կառուցվածքը, ապրանքի բարդությունը, համեմատական առավելությունն ու քաշ/գին հարաբերությունը:

64. Ծառայությունների պարագայում որպես արտահանման առաջնահերթություն սահմանվել են Հայաստանից արտահանվող ծառայությունների հետևյալ չորս հիմնական տեսակները՝

1. ներգնա զբոսաշրջություն և ճանապարհորդություն.
2. հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ.
3. ֆինանսական ծառայություններ.
4. ապահովագրություն և կենսաթոշակային ծառայություններ ու տրանսպորտ:

65. Նախանշված ուղենիշային 25 ապրանքների համար թիրախային շուկաների ընտրությունն իրականացվել է Որոշումների կայացման աջակցության վերափոխված մոդելի (անգլերեն համարժեքը՝ Modified Decision Support Model) կիրառության միջոցով՝ երկու փուլով: Շուկաների ընտրության առաջին փուլում իրականացվել է արտահանման հնարավոր այլընտրանքային շուկաների բացահայտում, որի նպատակով մշակվել է ինտեգրված բաղադրյալ ինդեքս՝ բաղկացած 7 ցուցանիշներից, որոնք ընդգրկում են արտահանման հնարավոր այլընտրանքային շուկայի կողմից տրված ապրանքային խմբի ներմուծման ծավալը, մեկ շնչի հաշվով ներմուծումը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, ներմուծվող ապրանքի մեկ միավորի արժեքը, գործընկեր երկրների միջև հեռավորությունը, արտահանման հնարավոր այլընտրանքային շուկայի կենտրոնացվածությունը, ինչպես նաև Հայաստանի և տվյալ շուկայի միջև պատմականորեն առկա առևտրային հարաբերությունները: Առաջին փուլի արդյունքում բացահայտվել են արտահանման տեսանկյունից 10 ամենամեծ ներուժ ունեցող շուկաները, որոնց ավելացվել են նաև տվյալ ապրանքային խմբի համար Միջազգային առևտրի կենտրոնի կողմից նախանշված թոփ 3 շուկաները: Երկրորդ փուլում բացահայտված 10-13 շուկաներից ընտրվել են արտահանման թոփ 3 հնարավոր այլընտրանքային շուկաները, որի համար նախորդ փուլում օգտագործված ցուցանիշներին ավելացվել է արտահանման հնարավոր այլընտրանքային շուկաների կողմից տրված ապրանքային խմբի համար Հայաստանի նկատմամբ կիրառվող առևտրային տարիֆները: Արդյունքում՝ բացահայտվել են ուղենիշային 25 ապրանքային խմբերի համար դիտարկվող արտահանման թոփ 3 հնարավոր այլընտրանքային շուկաները:

ԱՐՅՈՒՍԱԿ 3. ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ 25 ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԲԱՅԱՀԱՅՏՎԱԾ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ 3 ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ

6-ՆԻՇ	ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԹՈՓ 3 ՇՈՒԿԱՆԵՐ
030211	Ձուկ՝ թարմ կամ պաղեցրած, իշխան	Ռուսաստան, Բելառուս, Ռումինիա
220600	Խմիչքներ, ֆերմենտացված (օրինակ՝ խնձորողի, տանձի սիդր, մեղրի օղի, սակե)	Գերմանիա, ԱՄՆ, Ռուսաստան
220820	Խմիչքներ, որոնք ստացվում են խաղողի գինու կամ խաղողի մզվածքի թորումից	Հոնկոնգ, ԱՄԷ, ԱՄՆ
240220	Ծխախոտ	Ճապոնիա, Քուվեյթ, ԱՄԷ
260800	Ցինկի հանքաքարեր և խտանյութեր	Բելգիա, Ֆինլանդիա, Լեհաստան
261310	Մոլիբդենի հանքաքարեր և խտանյութեր; այրած	Ռուսաստան, Նիդերլանդներ, Կորեայի Հանրապետություն
261390	Մոլիբդենի հանքաքարեր և խտանյութեր, այլ, քան այրած	Բելգիա, Նիդերլանդներ, Կորեայի Հանրապետություն
271600	Էլեկտրական էներգիա	Իրան, Վրաստան, Թուրքիա
30XXXX	ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ	

6-ՆԻՇ	ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԹՈՓ 3 ՇՈՒԿԱՆԵՐ
330430	Կոսմետիկ և հարդարանքի պատրաստուկներ; մատնահարդարման կամ պեդիկյուրի պատրաստուկներ	Ռուսաստան, Գերմանիա, Քուվեյթ
391610	Միաթել՝ 1 մմ-ից ավելի լայնական հատվածքով, ձողիկներ, կաղապարածողեր և ձևավոր պրոֆիլներ՝ մշակած կամ չմշակած մակերևույթով, բայց այլ մշակման չենթարկված, էթիլենի պոլիմերից	Իռլանդիա, Շվեյցարիա, Իսրայել
392010	Պլաստիկ; թիթեղներ, թիթեղներ, թաղանթ, փայլաթիթեղ և ժապավեն (ոչ ինքնատեսնավոր), էթիլենի պոլիմերներից, ոչ բջջային և չամրացված, լամինացված, հենված կամ նմանապես համակցված այլ նյութերի հետ	Գերմանիա, Իռլանդիա, Մեծ Բրիտանիա
392520	Պլաստիկ; շինարարական իրեր, դռներ, պատուհաններ և դրանց շրջանակներն ու դռների շեմեր	Շվեյցարիա, Ավստրիա, Գերմանիա
611211	Սպորտային կոստյում. բամբակից, տրիկոտաժե կամ հյուսված	Շվեյցարիա, Քուվեյթ, Իսլանդիա
611241	Լողագգեստներ և լողագգեստներ կանանց կամ աղջիկների համար՝ պատրաստված սինթետիկ մանրաթելից, տրիկոտաժե կամ հյուսված գործվածքներից	Շվեյցարիա, Իսրայել, Իտալիա
611510	Աստիճանական կոմպրեսիոն ճնշումն ապահովող գուլպեղեն (օրինակ՝ գուլպաներ վարիկոզի համար), տրիկոտաժե կամ հյուսված	Իսլանդիա, Ռուսաստան, Խորվաթիա
620240	Վերարկուներ՝ կանանց կամ աղջիկների. վերարկուներ, անձրևանոցներ, թիկնոցներ, բաճկոններ (ներառյալ դահուկային բաճկոններ) և համանման արտադրատեսակներ՝ արհեստական թելերից, բացառությամբ 6204 ապրանքային խմբի (ոչ տրիկոտաժե կամ հյուսված)	Շվեյցարիա, Գերմանիա, Իտալիա
710229	Ալմաստներ. արդյունաբերական (բացի չմշակված կամ պարզապես սղոցված կամ ճեղքված), բայց չշրջանակված կամ չամրացրած	Շվեյցարիա, Ֆրանսիա, Կիպրոս
711311	Ոսկերչական իրեր և դրանց մասեր արծաթից՝ գալվանական ծածկույթ ունեցող կամ չունեցող, այլ թանկարժեք մետաղներով երեսապատված կամ չերեսապատված	Շվեյցարիա, ԱՄԷ, Ավստրիա
711319	Ոսկերչական իրեր և դրանց մասեր այլ թանկարժեք մետաղներից՝ գալվանական ծածկույթ ունեցող կամ չունեցող, թանկարժեք մետաղներով երեսապատված կամ չերեսապատված	Շվեյցարիա, ԱՄԷ, ԱՄՆ
720270	Ֆերոհամաձուլվածքներ. Ֆերոմոլիբդեն	Ավստրիա, Գերմանիա, Նիդերլանդներ
760711	Ալյումինե փայլաթիթեղ, առանց հիմքի, գլորված, բայց առանց հետագա մշակման, ոչ ավելի, քան 0,2 մմ հաստությամբ	Գերմանիա, Իտալիա, ԱՄՆ
853641	Էլեկտրական ապարատուրա. ռելե (60 վոլտ չգերազանցող լարման համար)	Շվեյցարիա, Ռուսաստան, Գերմանիա
90XXXX	Օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական չափիչ, հսկիչ, ճշգրիտ, բժշկական կամ վիրաբուժական գործիքներ և ապարատներ, դրանց մասերը և պարագաներ	ԱՄՆ, Գերմանիա, Իսրայել
911190	Ժամացույցի պատյաններ և դրանց մասեր	Շվեյցարիա, Գերմանիա, Հոնկոնգ

66. Յուրաքանչյուր ապրանքային խմբի համար արտահանման թուփ 3 հնարավոր այլընտրանքային շուկաների բացահայտումից հետո շուկաները, հնարավորության դեպքում, խմբավորվել են ավելի լայն շուկաներում՝ դրանցից Եվրոպական տնտեսական տարածքը (ԵՏՏ) և Շվեյցարիան, Ծոցի արաբական երկրները, Եվրասիական տնտեսական միությունն ու տարածաշրջանային երկրները:

67. Արտահանման համար առաջնահերթ 25 ապրանքների և դրանց համապատասխան 28 շուկաների բացահայտումից հետո մշակվել ու կիրառվել է Անսոֆֆի մատրիցը՝ արտահանման աճին նպաստող հնարավոր ուղիների գնահատման կառուցվածքային շրջանակ ապահովելու համար: Ըստ վերջինիս մեթոդաբանության՝ արտահանման շուկաները և ապրանքները դիտարկվում են հետևյալ տեսանկյուններից՝

- Շուկայի ներթափանցում, որը ենթադրում է արդեն իսկ արտահանվող ապրանքների առկա շուկաներ արտահանում,
- Շուկայի զարգացում, որը շեշտադրում է արդեն իսկ արտահանվող ապրանքների՝ նոր շուկաներ արտահանումը,
- Արտադրանքի զարգացում, որը ենթադրում է առկա շուկաներ նոր ապրանքների արտահանում,
- Դիվերսիֆիկացում, որը ենթադրում է նոր շուկաներ նոր ապրանքների արտահանում:

68. Ըստ վերլուծության շրջանակներում մշակված Անսոֆֆի մատրիցի մեթոդաբանության ու մատրիցի արդյունքների՝ դրա *Դիվերսիֆիկացում* բաժնում ընդգրկվել են 5 ապրանքներ, որոնք ուղենիշային ապրանքների բացահայտման վերլուծության փուլում ընդգրկվել են Միջազգային առևտրի կենտրոնի Ապրանքի դիվերսիֆիկացման ցուցանիշի շրջանակներում, և որոնցից յուրաքանչյուրի համար բացահայտված թոփ 3 շուկաները դիտարկվել են որպես արտահանման հնարավոր այլընտրանքային նոր շուկաներ: Ուղենիշային 25 ապրանքներից 2 ապրանք ներառվել են *Արտադրանքի զարգացում* բաժնում, իսկ մնացյալ 19 ապրանքներն ընդգրկվել են *Շուկայի ներթափանցում* և *Շուկայի զարգացում* բաժիններում:

69. Հետազոտության արդյունքում ընտրված 25 ապրանքային խմբերի արտահանումը խթանելուն միտված միջոցառումների մշակման համար այդ ապրանքային խմբերը բաժանվել են 5 կատեգորիաների՝ ըստ ապրանքների հատկանիշների և շուկաների բնույթի: Նշված 5 կատեգորիաներն են՝

- Ներկայումս արտահանվող սպառողական և ոչ սպառողական ապրանքներ, որոնք արտահանվելու են նոր շուկաներ,
- Ներկայումս արտահանվող քվազի-բորսայական ապրանքներ, որոնք արտահանվելու են նոր շուկաներ,
- Ներկայումս արտահանվող սպառողական ապրանքներ, որոնք շարունակելու են արտահանվել ներկայիս շուկաներ,
- Ներկայումս արտահանվող քվազի բորսայական ապրանքներ, որոնք շարունակելու են արտահանվել ներկայիս շուկաներ, և

- Սպառողական և ոչ սպառողական նոր ապրանքներ, որոնք ներկայումս չեն արտահանվում և պետք է սկսեն արտահանվել:

70. Արդյունքային շրջանակը ներառում է արտահանման սուբյեկտների համար բազմաբնույթ միջոցառումների իրականացում, ներառյալ ինստիտուցիոնալ մարմինների ձևավորում, արդյունաբերական գոտիների ստեղծում և այլն:

2.3 ՓՈԽԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

71. Սույն ծրագիրը նախանշում է Հայաստանի արտահանման ոլորտում առաջիկա 6 տարիների նախատեսվող բարեփոխումների շրջանակը և ուրվագծում է արտահանման վրա հիմնված տնտեսական քաղաքականության հենասյուները: Այն փոխկապակցված է Հայաստանում գործող և արտահանման ոլորտին ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվող մի շարք քաղաքականությունների հետ, որոնց առանցքը կազմում են 3 ծրագրային փաստաթղթեր՝ Հայաստանի վերափոխման մինչև 2050 թվականի ռազմավարությունը, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը, Զբաղվածության 2024-2030 թվականների ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը:

72. **Հայաստանի վերափոխման մինչև 2050 թվականի ռազմավարություն.** սույն փաստաթղթով նախանշված՝ առաջիկա 10 տարվա ընթացքում իրականացվելիք 16 կարևորագույն մեզանպատակներից 7-րդը՝ «Մշակված արտադրանքի զանգվածային արտահանում»-ը, ենթադրում է «կայացնել բարձր ավելացված արժեքով, մրցունակ վերջնական արտադրանք և զանգվածային նոր աշխատատեղեր ստեղծող, արտաքին շուկաներում ընդլայնվող և այդ շուկաների փոփոխվող պահանջներին արձագանքող մշակող արդյունաբերություն»: Նշված դրույթներն արտացոլվում են սույն ծրագրի արդյունքային շրջանակում, և ծրագիրը՝ ռազմավարական նպատակների, ծրագրերի ու միջոցառումների միջոցով, միտված է նշյալ հիմնարար նպատակների իրագործմանը:

73. **ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագիր.** ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի շրջանակներում արձանագրվում է հետևյալ դրույթը. «Միջազգային մրցունակության ավելացման ուղին է լինելու արտահանմանը միտված, գիտելիքահենք և ներառական տնտեսության ձևավորումը»: Բացի այդ, ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության նպատակներից մեկն է արտահանումը խթանող պայմանների ապահովումն ու միջավայրի ձևավորումը, որոնք սույն ծրագրի սկզբունքներ են հանդիսանում: Հարկ է նշել, որ այս ռազմավարական ծրագրի շրջանակներում սահմանված նպատակների իրագործումը մեծապես կնպաստի ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի հիմնական թիրախների իրականացմանը, որոնց թվում են՝ իրական ՀՆԱ-ի միջին տարեկան աճ առնվազն 7%, համախառն գործոնային

արտադրողականության տարեկան աճ առնվազն 5%, ինչպես նաև 10%-ից ցածր գործազրկության մակարդակ:

74. Զբաղվածության 2024-2030 թվականների ռազմավարական ծրագիր. Զբաղվածության 2024-2030 թվականների ռազմավարական ծրագիրը՝ դրա շրջանակներում ուրվագծված տարաբնույթ կարևորագույն նպատակների համատեքստում նախանշում է արդյունաբերական գոտիների ստեղծումը, որոնք խաչվող թեմա են վերջինիս և սույն ծրագրի համար. ռազմավարական երկու ծրագրերում կան դրույթներ, որոնք խթանում են արդյունաբերական գոտիների ստեղծումը և տնտեսական գործունեությունը: Այդ գոտիներում ստեղծվելիք ապրանքը հիմնականում նախատեսված է արտահանման համար, ինչն էլ կապող օղակ է հանդիսանում այս երկու փաստաթղթերի միջև, և որի շնորհիվ դրանց դրույթները փոխլրացնում են միմյանց:

75. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն.

Գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացման 2020-2030 թթ. ռազմավարական ծրագրի N 3 հավելվածի 4.5 միջոցառումը հղում է կատարում ավելի լայն փաստաթղթի մշակմանը, որը պետք է նախնական ուսումնասիրի և թիրախավորի առավել ներուժ ունեցող ապրանքային ուղղությունների արտահանման խթանումը:


3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

3.1 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

76. Հայաստանում տնտեսության արտահանելի հատվածն իր դիրքերը «զիջել է» ոչ արտահանելի ոլորտներին: Դրա մասին են վկայում 10 խոշոր հարկատուների կառուցվածքում 2023 թվականին 2022 թվականի համեմատությամբ տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև արտահանելի և ոչ արտահանելի ոլորտների ավելացված արժեքի աճի տեմպերի տարբերությունները:

77. 2023 թվականին 10 խոշոր հարկատուների կառուցվածքում արտահանող կազմակերպությունների թիվը կազմել է 5: Այդ ցուցանիշը նույնն է եղել նաև 2022 թվականին, սակայն փոփոխություն է տեղի ունեցել արտահանող կազմակերպությունների կառուցվածքում: 10 խոշոր հարկատուների կառուցվածքում արդյունահանող, ծխախոտի արդյունաբերության արտադրանքի և կապի ու հեռահաղորդակցության ծառայությունների արտահանմամբ զբաղվող կազմակերպություններին փոխարինել են ֆինանսական, լոգիստիկ և տեխնիկայի ներմուծման ոլորտի կազմակերպություններ, որոնք, թեպետ դասվում են արտահանելի հատվածի ոլորտների շարքին, սակայն իրենց գործունեության բնույթով պայմանավորված, չեն տեղավորվում արտահանման մասին համընդհանուր պատկերացումների մեջ, որոշ առումով նույնիսկ հակառակը: Ի լրումն՝ 2022 թվականին խոշոր հարկատուների առաջին տասնյակի վճարած հարկերի մեջ արտահանելի հատվածի կազմակերպությունների վճարած հարկերի կշիռը կազմել է 67.4%, մինչդեռ 2023 թվականին այդ նույն ցուցանիշը նվազել է՝ հասնելով 53.8%-ի: Հարկ է նշել նաև, որ 2023 թվականին տվյալ ցուցակում այդ կազմակերպությունների հայտնվելը պայմանավորված էր արտաքին գործոններով, և նրանց շրջանառության կտրուկ աճը կարելի է որակել որպես ժամանակավոր կտրուկ աճ (բում):


ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ 10 ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՄԵՋ ԱՐՏԱՀԱՆԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ ԵՎ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԿՇԻՈՇ ՈՒ ԲԱՅԱՐՁԱԿ ԱՐԺԵՔԸ



Աղբյուր՝ հաշվարկները կատարված են՝ հիմնվելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալների վրա

78. Արտահանելի հատվածի ավելացված արժեքի աճի տեմպը՝ ցուցադրում է նվազման միտում՝ հաշվի չառնելով 2022 թվականի՝ աշխարհաքաղաքական իրավիճակով և ՌԴ-ի ու ԱՄԷ-ի շուկաներում առաջացած հնարավորություններով պայմանավորված թոփքածև աճը: 2019 թվականին ցուցադրած 8.5% աճին հաջորդեց համաճարակային 2020 թվականի բացասական 4.7% ավելացված արժեքի նվազումը: Չնայած 2021 թվականին արտահանելի հատվածը ցուցադրեց 4.5% աճ, սակայն 2023 թվականին աճի տեմպը նվազել է 1.1 տոկոսային կետով, հասնելով 3.4%-ի, 2024 թվականին գրանցել է 5.9% աճ: Հատկանշական է նաև, որ սկսած 2017 թվականից՝ արտահանելի ոլորտների ավելացված արժեքի աճը միայն 2019 և 2022 թվականներին է ավելի արագ եղել, քան ոչ արտահանելի ոլորտներինը: Մնացյալ դեպքերում ոչ արտահանելի ոլորտներն ավելի բարձր աճի տեմպ են գրանցել:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. ԱՐՏԱՀԱՆԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԱՃԻ ՏԵՄՊ



Աղբյուր՝ հաշվարկները կատարված են՝ հիմնվելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալների վրա

3.2 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

79. Արտահանմանը նպաստող և մրցունակ միջավայրի ստեղծման համար սահմանվել է **Ռազմավարական նպատակ 1-ը**.

Տնտեսական աճի ու մրցունակության համար նպաստավոր միջավայրի ստեղծում՝ միջազգային առևտրային հարաբերությունների խթանման և երկրի գործարար միջավայրի բարելավման միջոցով:

Նպատակի իրագործմանն ուղղված ծրագրերը ներառում են.

Ծրագիր 1.1. *Արտահանման նկատմամբ «համակառավարական» (whole-of-the government) մոտեցում*

Արդյունքում՝ կստեղծվի Արտահանման խորհուրդ, որը պատասխանատու կլինի Արտահանման ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկման ու գնահատման, տարբեր ոլորտների ռազմավարությունների հետ համապատասխանեցման և ռազմավարության իրականացման հետ կապված խնդիրների լուծման համար, ինչպես նաև կստեղծվի Արտահանման խորհրդակցական խումբը՝ ապահովելու մասնավոր շահակիցների ու գործարար միությունների մասնակցությունը՝ գործելով որպես մասնագիտացված մարմին, որը կներկայացնի և կքննարկի փաստահեն առաջարկություններ՝ արտահանման հետ կապված հարցերի վերաբերյալ Արտահանման խորհրդին տրամադրելու բարձր մակարդակի խորհրդատվություն և ուղղորդում:

* Արտահանման խորհուրդը ղեկավարելու է ՀՀ վարչապետը կամ փոխվարչապետներից մեկը: Խորհրդում ընդգրկվելու են Հկոնոմիկայի, Արտաքին գործերի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարները, Պետական եկամուտների կոմիտեի նախագահը և բարձրաստիճան այլ պաշտոնավար անձինք: Քարտուղարությունն իրականացնելու է ՀՀ Հկոնոմիկայի նախարարությունը: Արտահանման խորհրդի գործառույթները ներառելու են ռազմավարական ծրագրի իրականացման առաջընթացի մշտադիտարկումն ու գնահատումը և ռազմավարության իրականացման հետ կապված խնդիրների լուծումը:

Արտահանման իրականացման արդյունավետության գնահատման և ներառականության ապահովման համար արտահանողների և լոգիստիկ կազմակերպությունների շրջանում կանցկացվեն տարեկան հարցումներ:

Ծրագիր 1.2. *Միջազգային առևտրային հարաբերություններ և համաձայնագրեր*

Արդյունքում՝ Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ կիրականացվեն աշխատանքներ երրորդ երկրների հետ արտոնյալ առևտրի համաձայնագրեր կնքելու ուղղությամբ՝ առաջնորդվելով Ռազմավարությամբ նախանշված առաջնահերթ ուղղություններով: Կնախաձեռնվեն բանակցություններ երրորդ երկրների հետ ծառայությունների առևտրի և ներդրումների խթանման վերաբերյալ համաձայնագրեր կնքելու ուղղությամբ: ԵԱՏՄ անդամակցության շրջանակներում կշարունակվեն բանակցությունները երրորդ երկրների հետ կնքվող արտոնյալ առևտրի համաձայնագրերում Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների համար արտոնյալ կարգավիճակ ստանալու նպատակով: Կանցկացվեն երկկողմ քննարկումներ այլ միջազգային բազմակողմ կազմակերպությունների հետ (ԱՀԿ, ԱՊՀ)՝ առկա խնդիրների արդյունավետ հասցեագրման և այս գործընթացների լավարկման նպատակով:

Ծրագիր 1.3. Կանոնակարգերի և վարչարարության բարելավում

Արդյունքում՝ կակտիվացվեն արտահանման ոչ սակագնային կարգավորումները նվազեցնելու ջանքերը: Գործողություններ կձեռնարկվեն ԵՄ-Հայաստան համագործակցության շրջանակի լիարժեք օգտագործման համար՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դրույթներն ավելի ամբողջական օգտագործելով: Կսահմանվի ապրանքների արտադրության, պիտակավորման և արտահանման ավելի արդյունավետ վերահսկողություն, իսկ Հայաստանի սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը կհամալրվի միջազգային չափանիշներին համապատասխանող լաբորատորիաներով: Կարգավորող մարմինների կամ սպառողների կողմից ապրանքի յուրաքանչյուր միավորի ծագմանն ու արտադրության գործընթացին հետևելու համար կներդրվեն յուրահատուկ նույնացուցիչներ կամ QR կոդեր: Զգայուն ապրանքների արտահանման գործընթացների հետ կապված կստեղծվեն դրանց յուրահատուկ բնութագրերը հաշվի առնող արտահանման վերահսկողության մեխանիզմներ ու կարգավորման ավելի հուսալի շրջանակ, նշված ապրանքներն այդ գործընթացում հետևելու և հետագծելու գործիքակազմ, որի արդյունքում կբարձրանա պահանջների պահպանման ու թափանցիկության մակարդակը, ինչպես նաև կապահովվի համագործակցության և հաշվետվողականության միջավայր: Այս ծրագրի շրջանակներում նաև ենթադրվում է, որ կապահովվի անդամակցություն միջազգային առաջատար ինստիտուտներին և/կամ կազմակերպություններին, որոնք ակտիվորեն ներգրավված են առաջնահերթ ապրանքների թվում առկա քվադի բորսայական ապրանքների հետ կապված գործունեության մեջ:

3.3 Ակնկալվող ազդեցության և վերջնարդյունքի ցուցանիշները

80. Ռազմավարական ծրագրի իրագործման արդյունքում նախատեսվում է մինչև 2030 թվականը՝

- բարձրացնել Առևտրի դյուրացման արդյունավետության ցուցանիշը (SՀԶԿ կողմից հաշվարկվող)՝ 2022 թվականի 1.44-ից հասցնելով մինչև 1.80-ի 2030 թվականին,

- խթանել Առևտրի ազատության ինդեքսի բարձրացմանը, այն 2024 թվականի 64.9 միավորից դարձնելով մինչև 73 միավոր 2030 թվականին:


4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

4.1 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

81. Հայաստանի արտաքին առևտրային հարաբերությունների և դրանց զարգացման հեռանկարների վրա մեծապես ազդում է Հայաստանի աշխարհագրական դիրքը: Լինելով դեպի ծով ելք չունեցող երկիր՝ Հայաստանն իր ապրանքաշրջանառությունն իրականացնում է մուլտիմոդալ փոխադրումների միջոցով՝ ցամաքային, օդային և ծովային տրանսպորտով՝ դեպի ծով ելք ստանալով Վրաստանի և Իրանի միջոցով: Իր հարևան երկրներից երկուսի՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ Հայաստանն ունի փակ սահմաններ, ընդ որում՝ Հայաստանի սահմանների երկարության **75%-ը** բաժին է ընկնում այս երկրներին: Ստեղծված իրավիճակում տրանսպորտային և լոգիստիկ հիմնահարցերը հանդիսանում են արտաքին առևտրի մեծագույն մարտահրավերներից մեկը՝ բարձր տրանսպորտային ու լոգիստիկ ծախսերի պարագայում նվազեցնելով Հայաստանում արտադրված ապրանքների գնային մրցունակությունը, խոչընդոտելով Հայաստանի՝ հեռանկարային շուկաների հասանելիությանը և սահմանափակելով արտահանման շուկաների դիվերսիֆիկացիայի հնարավորությունները: Հատկանշական է, որ Վրաստանի և Իրանի՝ այլ երկրների հետ ունեցած հարաբերությունները նույնպես ոչ ուղղակի, սակայն անմիջական ազդեցություն են ունենում Հայաստանի արտաքին առևտրի կազմակերպման հնարավորությունների վրա:

82. 2023 թվականի դրությամբ Հայաստանը լոգիստիկայի արդյունավետության ինդեքսի (անգլերեն՝ Logistic performance index, LPI) **2.5** ցուցանիշով աշխարհում զբաղեցրել է **97-րդ** տեղը՝ 5 տեղով զիջելով 2018 թվականի դիրքը (**92-րդ** տեղ՝ **2.61** ցուցանիշով): Այս ցուցանիշով Հայաստանն իր հարևաններից շրջանցում է միայն Իրանի Իսլամական Հանրապետությանը, որը 2.3 ցուցանիշով 2023 թվականին զբաղեցրել է 123-րդ հորիզոնականը: Ընդհանուր առմամբ, Հայաստանի լոգիստիկայի արդյունավետության ինդեքսի նվազումը պայմանավորված է դրա մեջ մտնող 6 գնահատականներից 2-ի՝ «փոխադրումների հեշտություն և մրցակցային գնագոյացում» և «բեռներին հետևելու և հետագծելու ունակության» գնահատականների զգալի անկմամբ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՂԻՍՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՎԵՑ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 2018-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐ



Աղբյուր՝ Համաշխարհային բանկի Լոգիստիկայի արդյունավետության հաշվարկներ

83. Բացի վերոնշյալը, Հայաստանը տրանսպորտային ու լոգիստիկ խնդիրների է առերեսվում ոչ միայն Թուրքիայի և Ադրբեջանի, այլ նաև Իրանի և Վրաստանի տարածքով տարանցման կազմակերպման ժամանակ:

84. Իրանի տարածքով հայկական ապրանքների տարանցման հետ կապված խնդիրներից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- որոշակի ապրանքների, օրինակ՝ ալկոհոլային խմիչքների, խոզի մսի՝ իսլամական երկրների տարածքով տարանցման սահմանափակումները,

- Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով անցնող երթուղու համար անհրաժեշտ վառելիքի ծախսի համաշխարհային և տեղական գների տարբերությամբ որոշվող՝ այլ երկրների բեռնատարների նկատմամբ կիրառվող վառելիքային ծախսերի վերահաշվարկման պահանջը,

- հայկական բեռնատարների նկատմամբ կիրառվող գանձումները ու այլ տրանսպորտային խնդիրներ,

- Իրանի հետ գործող երկաթուղային կապի բացակայությունը, քանի որ խորհրդային տարիներից մնացած երկաթուղային ցանցի մի հատվածն անցնում է Ադրբեջանի տարածքով,

- ճանապարհների սահմանափակ թողունակությունը և նոր ճանապարհների կառուցման անհրաժեշտության հետ կապված խնդիրները,

- Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների պատճառով՝ իրանական նավահանգիստների միջոցով այլ երկրների հետ ծովային եղանակով փոխադրումներ իրականացնելու սահմանափակումները, որի արդյունքում բազմաթիվ ծովային բեռնափոխադրող ընկերություններ չեն համագործակցում իրանական նավահանգիստների հետ:

85. Վրաստանի տարածքով տարանցման հետ կապված խնդիրներից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- բեռնատարների՝ Վրաստանում ճանապարհների օգտագործման համար կիրառվող համեմատաբար բարձր տուրքը,

- Վերին Լարսի անցակետի ոչ բավարար թողունակությունը, ինչպես նաև ձմռան ամիսներին ճանապարհի հասանելիության հետ կապված խնդիրները,

- երկաթուղային բեռնափոխադրումների ցածր ծախսարդյունավետությունը,

- Հայաստանի մուլտիմոդալ փոխադրումների իրականացման գլխավոր նավահանգիստների՝ Բաթումիի և Փոթիի ծանրաբեռնվածությունը,

- այլընտրանքային երթուղու՝ Բաթումի-Նովոռոսիյսկ, ծովային փոխադրամիջոցի (կոնտեյներային նավ) բարձր գինը, փոխադրման բազմակի գործողությունները, դրա հնարավորության և հաճախականության հետ կապված խնդիրները:

86. Բացի վերոնշյալից, Հայաստանն առերեսվում է խնդիրների նաև օդային փոխադրումների հաճախականության և գնի մասով: Զվարթնոց օդանավակայանի միջոցով բեռնափոխադրումների իրականացման մասով կան որոշակի ենթակառուցվածքային խնդիրներ, իսկ Շիրակ օդանավակայանում բեռների փոխադրման կազմակերպման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները բացակայում են:

4.2 Հիմնախնդիրների լուծման ուղիներն ու ակնկալվող արդյունքները

87. Ենթակառուցվածքների զարգացման և լոգիստիկ հասանելիություն ապահովելու համար մշակվել է **Ռազմավարական նպատակ 2-ը**.

Աշխարհագրական դիրքից բխող ռազմավարական առավելությունների ձեռքբերում՝ ենթակառուցվածքների զարգացման, գործընկերության հաստատման և նորարարական ապրանքների ու լոգիստիկ լուծումների ներդրման միջոցով:

Նպատակի իրագործմանն ուղղված ծրագրերը ներառում են.

Ծրագիր 2.1. Ենթակառուցվածքների զարգացում

Արդյունքում՝ նախատեսվում է, որ միջազգային զարգացման բանկերից կներգրավվեն ներդրումային նոր ծրագրեր՝ արդյունավետ, ապահով և կայուն տարանցիկ ուղիների ստեղծման համար: Կնախաձեռնվեն Հայաստանի և

Վրաստանի միջև տարանցման ծախսերի կրճատման բանակցություններ, ինչպես նաև կնախաձեռնվեն միջազգային միջնորդների ներգրավմամբ Թուրքիայի հետ բանակցություններ՝ հայկական բեռների ուղիղ տարանցումը Թուրքիայի տարածքով ապահովելու ուղղությամբ՝ ապահովելու ԵՄ-Թուրքիա մաքսային միությանը հասանելիությունը: Հայաստանի և Իրանի միջև կնախաձեռնվեն երկկողմ բանակցություններ՝ ուղղված Իրանում վառելիքի գնի տարբերության վճարման պահանջի չեղարկմանը: Գործնական քայլեր կիրառործվեն արտահանմանն ուղղված արդյունաբերական գոտիների (արտահանման ենթակա ապրանքների արտադրման/մշակման գոտիների) ստեղծման ուղղությամբ: Արտահանմանն ուղղված արդյունաբերական գոտիների ստեղծման ուղղությամբ բանակցություններ կվարվեն նաև միջազգային կազմակերպությունների հետ՝ խրախուսելու Հայաստանում դրանց հիմնադրումն ու գործունեությունը: Բացի վերոնշյալից, նախատեսվում է, որ կտրամադրվի նաև համակողմանի աջակցություն՝ այդ թվում ֆինանսական աջակցության տեսքով: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև սույն ռազմավարական ծրագրով ընտրված ապրանքներ արտադրող տեղական ձեռնարկությունների քարտեզագրում:

Ծրագիր 2.2. *Բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտահանման աջակցության ծրագիր*

Արդյունքում՝ նախատեսվում է, որ հատուկ ուշադրություն կդարձվի բարձր արժեք և փոխադրման ցածր ծախսեր ունեցող թեթևաքաշ ապրանքների արտադրությանն ու արտահանմանը, ինչի շնորհիվ նվազագույնի կհասցվի Հայաստանի տրանսպորտային ծախսերի և լոգիստիկ խնդիրների ազդեցությունը վերջինիս արտահանման մրցունակության վրա: Կվերանայվի «Տնտեսության արդիականացման» ընթացիկ ծրագիրը՝ ներառելու տարբեր խթաններ և գործիքներ, որոնք ուղղված են խրախուսելու ներդրումները նորագույն տեխնոլոգիաներում և խթանելու նորարարության մշակույթը: Կհաստատվեն նաև գործընկերային հարաբերություններ էլեկտրոնային առևտրային միջազգային հարթակների հետ, որոնք կօգնեն հայկական արտահանողներին ուղիղ հասանելիություն ապահովել միջազգային շուկաներին:

Ծրագիր 2.3. *Լոգիստիկ հասանելիություն շուկաներին*

Արդյունքում՝ Հայաստանից դեպի առանցքային առաջնահերթ շուկաներ կավելացվեն պարբերական չվերթների քանակը՝ տրանսպորտային մատչելիության բարելավման և արտահանման աճին նպաստելու նպատակով: Ի լրումն՝ առաջնային շուկաներում կստեղծվեն պահեստներ՝ արտահանման գործընթացն օպտիմալացնելու և արտահանման դիվերսիֆիկացիան խթանելու համար: Կկատարվեն իրագործելիության ուսումնասիրություններ Զվարթնոց և Շիրակ

օդանավակայանները տարանցիկ հանգույց դարձնելու մասով: Արտապատվիրված մասնագիտացված ընկերությունների միջոցով ընտրված շուկաների համար կմշակվեն ծախսարդյունավետ և հուսալի լոգիստիկ երթուղիներ: ԱՀԿ-ի կարգավորումներին համապատասխան ֆինանսական օգնություն կտրամադրվի արտահանման հուսալի օպերատորներին՝ ընտրված շուկաներում լոգիստիկ կենտրոններ՝ ներառյալ դրանց օժանդակ ենթակառուցվածքները ստեղծելու համար: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է, որ կտրամադրվի նաև ԱՀԿ պայմաններին համապատասխան ֆինանսական աջակցության՝ առևտրային տների շահագործման առաջին տարվա գործառնական ծախսերը հոգալու համար (30%-ի չափով):

4.3 Ակնկալվող ազդեցության և վերջնարդյունքի ցուցանիշները

88. Ռազմավարական ծրագրի իրագործման արդյունքում նախատեսվում է՝
- բարելավել Լոգիստիկ արդյունավետության ինդեքսը՝ 2023 թվականի 2.5-ից մինչև 2030 թվականը այն հասցնելով մինչև 3-ի,
 - արտահանողների բավարարվածության գնահատականի դրական փոփոխությունը 2024 թվականի համեմատ 2030 թվականին հասցնել մինչև 50%-ի:

5. ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

5.1 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

89. Արտահանողների կարողությունների զարգացման ուղղությամբ միջազգային փորձը ենթադրում է ինչպես ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում միջազգային առևտրի վերաբերյալ դասընթացների, այնպես էլ տարբեր աստիճանի կրթական ծրագրերի մշակում և ներդրում: Բացի այդ, նոր արտահանողների կարողությունների զարգացումը ենթադրում է նրանց և փորձառու մասնագետների միջև կապի ստեղծում և մենթորության ծրագրեր:

90. Հայաստանում արտահանողների կարողությունների զարգացմանն ուղղված կրթական ծրագրերը գրեթե բացակայում են, բացի այդ քիչ են փորձառու մասնագետները, ովքեր կարող են արժեքավոր գիտելիքներ փոխանցել ոլորտ նոր մուտք գործող մասնագետներին: Արդյունքում կա կարողությունների (հմտությունների և գիտելիքների) մեծ բաց, որը խոչընդոտում է Հայաստանում արտահանման զարգացմանը: Ավելին, նման մասնագետների պակասը հանգեցնում է նրան, որ հայ արտահանողները չեն կարողանում արտադրված ապրանքներն արդյունավետ կերպով արտահանել՝ սպառելով արտադրանքը կամ ներքին շուկայում, կամ էլ արտահանելով ամենամոտակա հասանելի շուկաներ (օրինակ, ՌԴ):

5.2 Հիմնախնդիրների լուծման ուղիներն ու ակնկալվող արդյունքները

91. Արտահանողների զարգացման և կարողությունների հզորացման համար մշակվել է **Ռազմավարական նպատակ 3-ը**.

Արտահանման աճի խթանում՝ բարձրացնելով ազգային արտահանողների առևտրային ներուժը և խթանելով բարդ ապրանքների ու ծառայությունների զարգացումը:

Նպատակի իրագործմանն ուղղված ծրագրերը ներառում են.

Ծրագիր 3.1. Առևտրային կարողությունների զարգացում

Արդյունքում՝ կիրականացվեն ընթացիկ և պոտենցիալ արտահանողների համար կարողությունների զարգացման ծրագրեր: Արտահանողների կարիքների գնահատման հիման վրա՝ այս ծրագրի շրջանակներում կկազմակերպվեն համապատասխան դասընթացներ, այդ թվում՝ միջազգային առևտրի ընթացակարգերի, ռիսկերի գնահատման, առևտրի ֆինանսավորման վերաբերյալ և այլն: Բացի այդ, կկազմակերպվեն մասնագիտական մենթորական ծրագրեր փոքր կազմակերպությունների և արտահանման ոլորտ նոր մուտք գործող մասնագետների համար՝ արտահանման փորձառու մասնագետների ներգրավմամբ: Կտրվի «Արտահանման ինկուբատոր» ծրագրի մեկնարկը, որը նախատեսվում է արտահանման հմտությունների ինտենսիվ

դասընթացներ տեղական շուկայում իրականացված վաճառքի ցուցանիշով 300 միլիոն դրամը գերազանցող, բայց 200 միլիոն դրամից պակաս արտահանում ունեցող կազմակերպությունների ներկայացուցիչների համար՝ առաջատար ընկերությունների հետ փոխկապակցված արտահանման փորձառու մասնագետների ներգրավմամբ: Ի հավելումն, ծրագրով նախատեսվում է, որ կիրականացվեն նաև ԱՀԿ պահանջներին համապատասխան լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցառումներ՝ ուղղված տեղական արտադրողների կարողությունների զարգացմանը:

Ծրագիր 3.2. Նորարարության և որակյալ արտադրանքի զարգացման պետական նախաձեռնություն

Արդյունքում՝ կբարելավվի արտադրանքի որակը՝ նոր հետազոտությունների, զարգացման և նորարարության (RD&I) նախաձեռնությունների միջոցով՝ ստեղծելով արտահանման հետ կապված նորարարական կենտրոններ, ինկուբատորներ և աքսելերատորներ՝ արտահանմանն ուղղված գործունեությամբ զբաղվող, զարգացման տարբեր փուլերում գտնվող ձեռնարկություններին անհրաժեշտ ենթակառուցվածքներով, ռեսուրսներով և մենթորությամբ ապահովելու նպատակով:

Ծրագիր 3.3. Առևտրի հետ կապված կրթական քաղաքականություն

Արդյունքում՝ կմշակվեն և կներդրվեն առևտրի կառավարման բարձրագույն կրթական նոր ծրագրեր: Համալսարանների համար կստեղծվեն ոլորտային գործընկերների, առևտրային ասոցիացիաների և պետական գործակալությունների հետ համագործակցելու խթաններ՝ ուսանողների համար տարատեսակ առևտրային փորձուսուցումների ապահովման նպատակով: Արտահանման բարձր ներուժ ունեցող ոլորտներում ներգրավված աշխատուժը կզինվի անհրաժեշտ հմտություններով՝ աշխատունակությունը բարձրացնելու համար: Կբարեփոխվի Հայաստանի մասնագիտական (նախնական մասնագիտական և միջին մասնագիտական) կրթության և ուսուցման (ՄԿՈԽ) համակարգը՝ ՄԿՈԽ ուսումնական ծրագրերի վերանայման միջոցով՝ ընդգրկելու նորահայտ տեխնոլոգիաները և ոլորտին հատուկ հմտությունները:

5.3 Ակնկալվող ազդեցության և վերջնարդյունքի ցուցանիշները

92. Ռազմավարական ծրագրի իրագործման արդյունքում նախատեսվում է մինչև 2030 թվականը՝

- բարելավել արտահանող ընկերությունների միջին աշխատավարձի աճի և մասնավոր ընկերությունների միջին աշխատավարձերի աճի համամասնությունը՝ այն 2024 թվականի -0.3%-ից 2030 թվականին հասցնելով մինչև 3.2%-ի,
- խթանել ապրանք արտահանող կազմակերպությունների քանակի ավելացումը՝ դրանց թիվը 2023 թվականի 272-ից 2030 թվականին հասցնելով մինչև 440-ի:

6. ՇՈՒԿԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՈՒՄ

6.1 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

93. Հայաստանի արտահանման շուկաների կենտրոնացվածությունը միշտ ավելի բարձր է եղել, քան ներմուծման շուկաներինը: 2022 թվականին Հայաստանի արտահանման կառուցվածքում երեք ամենամեծ կշիռներ ունեցող գործընկերների (ՌԴ, ԱՄԷ և Չինաստան) մասնաբաժինը կազմել է ընդհանուր արտահանման 62.1%-ը, իսկ 2023 թվականին այդ նույն 3 երկրներին բաժին է ընկել Հայաստանի արտահանման ծավալների 72.4%-ը: Հարկ է նշել, որ այդ տեղաշարժի մեջ նաև մեծ դեր ունեն ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում առաջացած գործոնները: Ընդհանուր առմամբ, 10 հիմնական գործընկերների (աղյուսակ 4)՝ Հայաստանի արտահանման ծավալում զբաղեցրած կշիռը 2023 թվականին նվազել է 3.1 տոկոսային կետով՝ 2022 թվականի 86.1%-ի նկատմամբ՝ կազմելով 83%: Չնայած նշյալ որոշակի նվազմանը, Հայաստանի արտահանման շուկաների կենտրոնացվածությունը, այնուամենայնիվ, բարձր է:

94. Թեև Ռուսաստանի կշիռը Հայաստանի արտահանման կառուցվածքում նվազել է, այնուամենայնիվ, այդ երկիր արտահանման ծավալներն աճել են: Ռուսաստանի կշռի նվազման պատճառը մյուս գործընկեր երկրների, մասնավորապես՝ դեպի ԱՄԷ արտահանման ծավալների քառակի աճն է, որի արդյունքում ԱՄԷ-ի կշիռը 2022 թվականի 9.9%-ից 2023 թվականին դարձել է 26%: Հայաստանի արտահանման կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում 2023 թվականին արտահանման շուկաների կենտրոնացվածությունը ավելի է աճել: Դա վկայում է այն մասին, որ ՌԴ և ԱՄԷ շուկաները հետզհետե ավելի ու ավելի նշանակալից դեր են գրավում Հայաստանի արտահանման համար, և, պայմանավորված իրենց բարձր հասանելիության հետ, դուրս են մղում մրցակցությունից մնացյալ գործընկերներին, ինչն արտահայտվում է արտահանման կառուցվածքում վերջիններիս կշիռների նվազմամբ:


**ԱՂՅՈՒՍԱԿ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ 10 ԱՄԵՆԱՄԵԾ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԵԻՌԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԵՋ 2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐ**

Երկիր	2022		2023	
	Արժեք հազար ԱՄՆ դոլար	Կշիռն ընդհանուր արտահանման մեջ	Արժեք հազար ԱՄՆ դոլար	Կշիռն ընդհանուր արտահանման մեջ
1 Ռուսաստանի Դաշնություն	2 462 777	45.5%	3 540 192	41.4%
2 Արաբական Միացյալ Էմիրություններ	534 145	9.9%	2 224 341	26%
3 Չինաստան	369 504	6.8%	425 350	5.0%
4 Շվեյցարիա	254 503	4.7%	83 337	1.0%
5 Իրաք	249 548	4.6%	180 597	2.1%
6 Նիդերլանդներ	214 864	4.0%	234 133	2.7%
7 Բուլղարիա	208 372	3.9%	97 413	1.1%
8 Վրաստան	162 411	3.0%	139 702	1.6%
9 Իրան	110 370	2.0%	94 550	1.1%
10 Գերմանիա	106 028	2.0%	87 557	1.0%

Աղբյուր՝ Արմստատ, արտաքին առևտրի տվյալների բազա

95. Եթե, օրինակ՝ 2021 թվականին Հայաստանի արտահանման շուկաների կառուցվածքում ամենամեծ կշիռ ունեցող առևտրային հինգ գործընկեր երկրների՝ ՌԴ-ի, Չինաստանի, Շվեյցարիայի, Բուլղարիայի և Նիդերլանդների ընդհանուր մասնաբաժինը կազմում էր արտահանման 71.4%-ը, ապա 2023 թվականին Հայաստանի արտահանման ծավալների 2/3 մասը բաժին է ընկել ընդամենը 2 երկրների շուկաներին՝ ՌԴ-ին և ԱՄԷ-ին:


ԳԾԱՊԱՏԿԵՐ 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԿՇԻՈՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

96. Արտահանման շուկաների կենտրոնացվածության աճի մասին է վկայում նաև Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը՝ 2021 թվականից սկսված կտրուկ աճը: Եթե 2021 թվականին այդ ցուցանիշը հավասար էր **1,222**-ի, ապա 2023 թվականին այն կրկնակի աճել է 2021 թվականի նկատմամբ՝ կազմելով 2,463: Կենտրոնացվածության աճ է նկատվել նաև արտահանվող ապրանքների գծով: Չնայած այն բանի, որ արտահանվող ԱՏԳ ԱԱ 4-նիշ ապրանքների կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը՝ կապված ռուս-ուկրաինական հակամարտության հետ և դրա արդյունքում՝ ռուսական շուկայում առաջացած հնարավորություններով ու հայկական արտահանման ապրանքային կառուցվածքում նոր ապրանքների նկատմամբ առաջացած պահանջարկով, 2021 թվականի համեմատ 2022 թվականին նվազել է 52%-ով՝ կազմելով 450, այնուամենայնիվ, 2023 թվականին նորից աճ է գրանցել, հասնելով 707-ի: Միևնույն ժամանակ ԱՏԳ ԱԱ 2-նիշ ապրանքների համապատասխան ցուցանիշը նույն 2023 թվականին 96.3% աճ է գրանցել, ինչը վկայում է արտահանվող ապրանքների նեղացման մասին, որը նաև ածանցյալ արդյունքն է արտահանման շուկաների կենտրոնացվածության աճի (արտահանվող ապրանքների սպեցիֆիկացիա արտահանման կենտրոնացող շուկաների պահանջներին համապատասխան): Նշված ենթադրության մասին է խոսում ԱՏԳ ԱԱ դասակարգչի 71-րդ խմբի տակ դասվող թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված արտադրատեսակների արտահանման ծավալների՝ 2023 թվականին՝ 2022 թվականի նկատմամբ 224.6% աճը, որի արդյունքում ընդհանուր արտահանման մեջ այդ ապրանքային խմբի կշիռը 2022 թվականի 18.4%-ից 2023 թվականին դարձել է 38.4%, ինչը կապված է ԱՄԷ-ի կողմից տվյալ ապրանքային խմբի նկատմամբ ներկայացրած պահանջարկով:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ, HS-2 ՆԻՇ և HS-4 ՆԻՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՐՖԻՆԴԱԼ-ՀԻՐԶՄԱՆԻ ԻՆԴԵՔՍԸ 2017-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐ



Աղբյուր՝ հաշվարկները կատարված են՝ հիմնվելով ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարանի տվյալների վրա

97. Արտաքին շուկաներում հայկական արտադրատեսակների մուտք գործելուն ու առաջխաղացմանը խոչընդոտ է հանդիսանում նաև հայկական առանձին ապրանքների բրենդավորման մեխանիզմների բացակայությունը: Հայկական որոշ ապրանքների պարագայում առկա է աշխարհագրական նշամաճ պաշտպանություն ապահովելու անհրաժեշտություն՝ արտահանման և այլ երկրների տարածքներով տարանցման համար:

6.1 Հիմնախնդիրների լուծման ուղիներն ու ակնկալվող արդյունքները

98. Շուկաների ընդլայնման և նոր հաճախորդների ներգրավման համար մշակվել է **Ռազմավարական նպատակ 4-ը**.

Արտաքին շուկաների և ապրանքների դիվերսիֆիկացիա՝ հիմքեր ստեղծելով հնարավորությունների ընդլայնման, դիմակայունության ու կենսունակ տնտեսական միջավայրի համար:

Նպատակի իրագործմանն ուղղված ծրագրերը ներառում են.

Ծրագիր 4.1. Շուկայի ուսումնասիրության և շուկա մուտք գործելու ծրագիր

Արդյունքում՝ կնախաձեռնվեն արտերկրում բիզնեսը-բիզնեսին (B2B) ցուցահանդեսների համակարգումը, կազմակերպումը և համաֆինանսավորումը բարելավելու համար նախատեսված գործողություններ: Ֆինանսական խթաններ կստեղծվեն Հայաստանի արտահանողների կողմից միջազգային շուկաների վերաբերյալ հետազոտություններ ձեռք բերելու համար, ինչը թույլ կտա նրանց ավելի արդյունավետ բիզնես ռազմավարություն մշակել՝ թիրախային շուկաներում: Կուսումնասիրվի և կիրառարակվի ընտրված ապրանքներին վերաբերող միջազգային ցուցահանդեսների ամբողջական ցուցակ: Բացի վերոնշյալը, Հայաստանում կկազմակերպվեն քվադի բորսայական ապրանքներին (օրինակ՝ մոլիբդենին) նվիրված միջոցառումներ, կոնֆերանսներ և աշխատանքային հանդիպումներ, ինչը կնպաստի, որ Հայաստանը այդ ապրանքների գծով իր դիրքերն ամրապնդի համաշխարհային արժեշղթաներում:

Ծրագիր 4.2. Ազգային բրենդների ստեղծում

Արդյունքում՝ կնախաձեռնվեն բանակցություններ Իփսոս՝ շուկայի հետազոտական և խորհրդատվական համաշխարհային ընկերության հետ՝ Հայաստանը ներառելու Անհոլտ-Իփսոսի Ազգային բրենդի ինդեքսի համատեքստում: Կներդրվի Ազգային բրենդի նոր ծրագիր, որի նպատակն է աջակցել արտահանողներին՝ խթանելով հայկական ապրանքների և ծառայությունների միասնական և ազդեցիկ ինքնությունը միջազգային շուկաներում: Պետություն-մասնավոր գործընկերության մոդելի հիման վրա կստեղծվեն հատուկ ձեռնարկություններ՝ միջազգային շուկաներում հովանոցային բրենդների (օրինակ՝ հայկական կոնյակի) ստեղծման և առաջխաղացման համար՝ պահպանելով որակի ու տարբերակման միասնական չափանիշները: Կգործարկվեն նաև թվային մարքեթինգի արշավներ, որոնք ներառում են որոնման համակարգերի օպտիմալացում (Search Engine Optimization), սոցիալական մեդիա մարքեթինգի (SMM) իրագործում՝ հատուկ ուշադրություն դարձնելով լեզվական և մշակութային առանձնահատկություններին:

6.2 Ակնկալվող ազդեցության և վերջնարդյունքի ցուցանիշները

99. Ռազմավարական ծրագրի իրագործման արդյունքում նախատեսվում է մինչև 2030 թվականը՝

- նվազեցնել Հայաստանի արտահանման շուկաների կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը՝ այն 2024 թվականի 2752-ից 2030 թվականին հասցնելով մինչև 727-ի,
- առաջնահերթ շուկաներում նոր ապրանք արտահանողների թիվը մինչև 2030 թվականը հասցնել մինչև 50-ի:

7. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

7.1 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ


100. Հայաստանում արտահանման ֆինանսավորման խնդիրները կարելի է բաժանել 2 ենթախմբերի՝

- Ոչ լիարժեք ինստիտուցիոնալ համակարգ,
- Սահմանափակ ֆինանսավորում և կարողություններ:

101. Վերջին տարիներին արձանագրվել է արտահանման խթանման պետական կարողությունների կորուստ, մասնավորապես՝ չի գործում արտահանման խթանման գործակալությունը, իսկ Էկոնոմիկայի նախարարությունում միայն 2023 թվականին է ձևավորվել հատուկ մասնագիտական ստորաբաժանում՝ սահմանափակ ռեսուրսներով:

102. Արտահանման պետական խթանման միջազգային փորձը ենթադրում է պետական բյուջեից նշանակալի ֆինանսական միջոցների հատկացում: Այս հարցով՝ Հայաստանը զգալի հետ է մնում բազմաթիվ երկրներից, օրինակ՝ արտահանման խթանման բյուջե/ապրանքային արտահանում հարաբերակցությունը Չիլիում և Կոլումբիայում 0.15% է, Պորտուգալիայում՝ 0.22%, ԱՄՆ-ում՝ 0.28%, Էստոնիայում՝ 0.37%, մինչդեռ Հայաստանում այն 2023 թվականին հավասար է եղել **0.07%-ի**:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 13. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓԱՏԱՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ, 2018-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐ



Աղբյուր՝ հաշվարկները կատարված են՝ հիմնվելով Ֆինանսների նախարարության տվյալների վրա

103. Հայաստանում արտաքին գործունեությունն ապահովագրող միակ կազմակերպությունը Հայաստանի արտահանման ապահովագրման գործակալությունն է: Ապահովագրությունը, թեև ապահովում է արտահանման բազային մակարդակի պաշտպանություն, այնուամենայնիվ, հաճախ բավարար չէ արտահանման գործարքների ռիսկերի ամբողջական ծածկույթի և արտահանողների անվտանգության ամբողջական ապահովման համար: Վարկերի և երաշխիքների ապահովագրության միջազգային ասոցիացիայի (ICISA) տվյալներով՝ բարձր ռիսկային երկրներում արտահանման վարկերի ավելի քան **70%-ը** ծածկվում է վերաապահովագրությամբ, ինչը փաստում է արտահանման վերաապահովագրության կարևորության մասին:

7.2 Հիմնախնդիրների լուծման ուղիներն ու ակնկալվող արդյունքները

104. Արտահանման խթանման և ֆինանսավորման համար մշակվել է **Ռազմավարական նպատակ 5-ը**.

Արտահանման դիմակայուն և ադապտիվ էկոհամակարգի ստեղծում՝ արտահանման խթանման ծրագրերի ներդրման և համապատասխան ֆինանսական ու ոչ ֆինանսական ենթակառուցվածքների ձևավորման միջոցով:

Նպատակ իրագործմանն ուղղված ծրագրերը ներառում են.

Ծրագիր 5.1. Արտահանման խթանման պետական մեխանիզմ

Արդյունքում՝ առաջարկվում է «Երեդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի գործառույթների և կանոնադրության փոփոխություն, որի արդյունքում հիմնադրամի գործունեությունը միտված կլինի այս ռազմավարական ծրագրի իրագործման ապահովմանը՝ տրամադրելով համապարփակ օժանդակություն, ռեսուրսներ և տեղական արտահանողներին ուղղորդում միջազգային շուկաներում հաջողությամբ գործելու համար:

Ծրագիր 5.2. Արտահանման ֆինանսավորում և ապահովագրություն

Արդյունքում՝ կներդրվի արտահանման վարկերի ապահովագրության ընդլայնված պետական ծրագիր, որը կապահովի միջազգային առևտրի հետ կապված տարաբնույթ ռիսկերի առավել ամբողջական ծածկույթ: Արտահանողների կապիտալ ծախսերի ֆինանսավորման, շրջանառու միջոցների համալրման և առևտրի հետ կապված՝ կտրամադրվի ծախսերի փոխհատուցման անհատական ֆինանսական աջակցություն: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է, որ կտրամադրվի նաև ԱՀԿ պահանջներին համապատասխան ֆինանսական աջակցություն այն արտահանող կազմակերպություններին, որոնց արտահանման ծավալները նախորդ տարի կազմել

են առնվազն 500 միլիոն ՀՀ դրամ, և որոնք կնքել են արտահանման պայմանագրեր 3-6 ամիս ժամկետով, իսկ մասնագիտական առևտրի տների ստեղծումը խթանելու համար կտրամադրվի ԱՀԿ պահանջներին համապատասխան մինչև 75% տոկոսագումարի ֆինանսավորում, եթե վարկի արժեքը չի գերազանցի 2 միլիարդ ՀՀ դրամը, իսկ սուբսիդավորման ժամկետը չի երկարաձգվի ավելի քան 2 տարի:

Ծրագիր 5.3. Հայաստանի առևտրային կցորդներ

Արդյունքում՝ կավելանա առևտրական կցորդների թիվը, ինչը ենթադրում է նաև գործընկեր երկրների քանակի ավելացում, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող պահանջները կհամապատասխանեցվեն ժամանակակից չափանիշներին և կսահմանվեն հստակ արդյունքային ցուցանիշներ: Կիրականացվի նոր ծրագիր սփյուռքահայ պատվավոր առևտրային ներկայացուցիչների համար, որոնք իրենց երկրներում կատարելու են Հայաստանի առևտրային շահերի բանակցման գործառույթներ:

7.3 Ակնկալվող ազդեցության և վերջնարդյունքի ցուցանիշները

105. Ռազմավարական ծրագրի իրագործման արդյունքում նախատեսվում է մինչև 2030 թվականը բարելավել արտահանման խթանման ծախսերի և տեղական արտահանման տարեկան հավելաճի (դոլարային արտահայտությամբ) հարաբերակցության ցուցանիշը՝ հասցնելով այն 6.65-ի 2030 թվականին:

8. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԱՐԳԸ

106. Ռազմավարական ծրագրի և գործողությունների ծրագրի արդյունավետ իրագործման և մշտադիտարկման գործառույթները իրականացնում է գործողությունների ծրագրի M 1.1.1 կետով սահմանված Արտահանման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ)՝ գործելով որպես ռազմավարական ծրագրի ընդհանուր համակարգման, մշտադիտարկման և գնահատման բազմաշահառու մարմին և ապահովելով գործողությունների ծրագրով խորհրդի համար սահմանված ցուցանիշները:

107. Խորհուրդը ռազմավարական ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի համակարգմանը, մշտադիտարկմանը և գնահատմանն աջակցելու գործառույթներ իրականացնող մշտապես գործող բազմաշահառու խորհրդատվական մարմին է:

108. Խորհուրդը ձևավորվում է ՀՀ վարչապետի որոշմամբ՝ ՀՀ էկոնոմիկայի, արտաքին գործերի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարների, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի և այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց ներգրավմամբ՝ ՀՀ վարչապետի ղեկավարությամբ:

109. Խորհուրդը կարող է ձևավորել աշխատանքային խմբեր, որոնք պատասխանատու կլինեն ռազմավարական ծրագրով սահմանված առանձին ռազմավարական նպատակներից բխող գործողությունների իրականացման համակարգման համար:

110. Մշտադիտարկման և գնահատման մեթոդոլոգիական ուղեցույցը հաստատում է խորհուրդը: Խորհուրդը ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման արդյունավետության զեկույցների քննարկման արդյունքում կարող է.

- ՀՀ կառավարությանը ներկայացնել առաջարկություններ՝ ռազմավարական ծրագրում և գործողությունների ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ,
- առանձին գործողությունների կատարման համար պատասխանատու մարմիններին ներկայացնել խորհրդատվական կարծիքներ՝ առանձին գործողությունների կատարման ընթացքի, աստիճանի և կատարմանն ուղղված հնարավոր անհրաժեշտ քայլերի վերաբերյալ:

111. Այդ առաջարկները հավանության արժանանալու դեպքում առաջարկվող փոփոխությունների իրականացման աշխատանքները համակարգվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից: Ռազմավարական ծրագրի ու գործողությունների ծրագրի ազդեցության գնահատման նպատակով խորհուրդը միջնաժամկետ ու երկարաժամկետ փուլերում տարբեր թիրախային խմբերում կարող է

նախաձեռնել հանրային կարծիքի հարցումներ: Միջնաժամկետ փուլում իրականացված հարցումների արդյունքների գնահատման ու վերլուծության արդյունքում խորհուրդը կարող է նախաձեռնել ռազմավարական ծրագրի ու գործողությունների ծրագրի, ինչպես նաև իրականացման մեթոդների ու մեխանիզմների վերանայման ու փոփոխությունների նոր շրջափուլ: Գործընթացի նկատմամբ առավել թափանցիկություն ապահովելու նպատակով ռազմավարական ծրագիրը և գործողությունների ծրագիրը տեղադրվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում, որտեղ տեղադրվում են նաև կիսամյակային հաշվետվությունները և տարեկան զեկույցները, որոնցում մի քանի բաղադրիչներից կազմված գործողությունների դեպքում մատնանշվում են յուրաքանչյուր բաղադրիչի կապակցությամբ կատարված միջոցառումները: Խորհուրդը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարություն է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն, իսկ տարեվերջին՝ տարեկան ամփոփ զեկույց: Խորհուրդն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է նախաձեռնել ռազմավարական ծրագրի առանձին նպատակների իրագործման համար պատասխանատու մարմինների հաշվետվողականության լրացուցիչ գործընթացներ:

112. Խորհրդին կից ձևավորվելու է Արտահանման խորհրդակցական խումբը՝ միտված ապահովելու մասնավոր շահակիցների և գործարար միությունների մասնակցությունը՝ առաջատար արտահանողների, փոխադրող կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների և գործարար միությունների ներկայացուցիչների ներգրավմամբ:

113. Գործարար միությունների, փոխադրող կազմակերպությունների ներկայացուցիչների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների՝ ամենամեծ արտահանում գրանցած առաջին հինգ արտահանողների թեկնածությունների առաջադրումն իրականացվում է բաց և թափանցիկ գործընթացով՝ ապահովելով մասնակցային մոտեցում: Խորհուրդն ու խորհրդակցական խումբն իրենց գործառույթներն իրականացնում են նիստերի միջոցով՝ համաձայն իրենց գործունեության կարգի: Խորհրդի և խորհրդակցական խմբի նիստն իրավագոր է խորհրդի կամ խորհրդակցական խմբի անդամների կեսից ավելին ներկա լինելու դեպքում, իսկ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան սահմանված չէ խորհրդի կամ խորհրդակցական խմբի աշխատակարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ